Azg

Azg armenian daily

Յունիս 1 Երեքշաբթի 1993

ՈՒՍԿՈՒՍ ԱԶԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Գ տարի, թիւ 101 (352)
գինը 10 ռ.
դասիչ 69149

Երեւան 375010
Հանրապետութեան 47

հեռ. 581841, ֆաքս 562941
տելեքս 243266 CPIRI SU

Գրոզնի

Մահափորձ Ջոհար Դուդաեւի դեմ

Չեչնիայի մայրաքաղաք Գրոզնիում կիրակի երեկոյեան զինված հարձակում է կատարվել նախագահ Ջոհար Դուդաեւի վրա: Այս մասին երեկ առավոտյան ԻՏԱ-ին հայտնեց նախագահի մամուլի ծառայության ղեկավար Մովլադի Ուդուգովը, դա տեղի է ունեցել նախագահի տուն վերադառնալու ժամին, քաղաքական հրաժարականի շրջանում, որտեղ արդեն 2 ամիս է, ինչ շարունակվում է ընդդիմադիր քաղաքական ուժերի հանրահավաքը, ի պաշտպանություն սահմանադրության եւ խորհրդարանի: Մ. Ուդուգովի խոսքերով, երբ նախագահական շքախումբն անցել է քաղաքական հրաժարականի մոտով, որտեղ եղել են հանրահավաքի մոտ 150 մասնակիցներ, ավտոմատային կրակահերթ է լսվել: Դուդաեւը դուրս է եկել մեքենայից, մտադրվելով ելույթ ունենալ հանրահավաքում, բայց այդ պահին կրկին ավտոմատային կրակահերթեր են լսվել: Նախագահի թիկնապահներից մեկը վզից վիրավորվել է: Նախագահի պահակախումբը պատասխան կրակ չի բացել: Նախագահ Ջ. Դուդաեւը սխալված է եղել հեռանալ հրապարակից: Վիրավոր թիկնապահին հասցրել են հիվանդանոց: Իր հերթին, երեկ, Գրոզնու քաղաքային հավաքի ղեկավարի տեղակալ Լոմալի Բեխկոեւը հերքեց այդ լուրը, այն անվանելով նախագահ Դուդաեւի շրջապատի «հերթական սադրանքը»: Բեխկոեւը հայտնեց, որ ըստ ականատեսի, միտինգավորների եւ հրապարակին մոտեցող նախագահի միջեւ վեճ է ծագել, «սակայն վերջինիս վրա ոչ ոք չի կրակել»: Նախագահ Դուդաեւն ինքն է մեղավոր կատարվածի մեջ, քանի որ ինքն էր գնացել ընդդիմության հանրահավաքի վայրը», ավելացրեց Բեխկոեւը: ԻՏԱ

Աբխազիա

Լիբիացիները Երուսաղեմ են գնում

1967 թ. ի վեր առաջին անգամ լիբիացիներին թույլատրվեց Երուսաղեմ գնալ ուխտի՝ աղոթելու Ալ Ասխայի մեծ մզկիթում: 200 լիբիացի ուխտավորներ երեկ եգիպտոսից մտան Գազայի շրջան եւ հասան Երուսաղեմ, որտեղ ընդունվեցին Իսրայելի զբոսաշրջիկության նախարարի եւ լիբիական ծագումով բազմաթիվ հրեաների կողմից: Ողջույնի խոսք ասասանելով, նախարարը հույս հայտնեց, որ շուտով գնդապետ Քադդաֆին ինքն էլ ուխտի կգա Երուսաղեմ: Վերջինը հատուկ նամակով խնդրել էր ուխտավորների մուտքը թույլատրել Իսրայել, ինչը եւ արվեց, ցույց տալու իր «բաց» քաղաքականությունը:

Հարձակում ՄԱԿ-ի զինվորների վրա

Կամբոջայի արեւելյան շրջաններից մեկում երեկ թակարդ լարվեց ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերի դեմ, որի հետեւանքով սպանվեց 1 եւ վիրավորվեց 3 զինվոր: Իշխանություններն արարի համար պատասխանատու նկատեցին կամիր ֆներներին, իսկ «ժողովրդի կուսակցության» ներկայացուցիչները մեղադրեցին ընտրություններին վերահսկող կազմակերպությանը ֆվեարկության ոչ վերջնական արդյունքները հրապարակելու համար, որը, ըստ նրանց, կանխահաս կերպով գրգռել է տարբեր ուժերին:

«Անվտանգության գոտին» անիրականանալի

Բոսնիայում հաստատված ՄԱԿ-ի հրամանատարությունից հայտնեցին, թե Մարաեւոյում եւ այլուր վերակսված կռիվները ոչ մի հույս չեն թողնում երկրում «անվտանգության գոտիներ» ստեղծելու միջազգային ծրագրի իրականացման համար, մանավանդ որ սերբ ղեկավարները վերջերս հետզհետե ավելի են դժգոհություն հայտնում կարույս սադաֆարակիրների ներկայությունից, պահանջելով վերջինների հեռացումը: Մյուս կողմից, Բոսնիայի խորվաթները, որոնք իսլամների դեմ կռիվներ են մղում Մոստարում եւ այլ վայրերում, իրենց մտավախություն հայտնեցին, որ կռիվները կարող են տարածվել եւս տարածվել իրենց միջեւ:

Քլինթոնն անում է այն, որին դեմ էր

Նախագահ Բիլ Քլինթոնը, երեկ Վաշինգտոնում բացումը կատարեց Վիետնամում զոհված ամերիկացի զինվորներին նվիրված հուշարձանի, թիրախ դառնալով լրագրողների ճնշադատության: Բանն այն է, որ Վիետնամի պատերազմի ժամանակ դեռեւս երիտասարդ Քլինթոնն ակտիվորեն մաս էր կազմում հակապատերազմյան շարժմանը:

Զարաբաղ

Ստեփանակերտը մտահոգ Երեւանի համաձայնությամբ

Հաշվի առնելով այն, որ Ռուսաստանի, Թուրքիայի եւ ԱՄՆ եռակողմ նախաձեռնությունը բոլորովին չի համապատասխանում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 822 բանաձեւին, եւ Թուրքիայի քայքայիչ դերը դարաբաղյան հակամարտության կարգավորման գործում, ԼՂՀ կառավարությունն իր մտահոգությունն է հայտնել այն կապակցությամբ, որ Հայաստանի Հանրապետությունն անվերապահորեն իր համաձայնությունն է տվել վերոհիշյալ նախաձեռնությանը: ԼՂՀ ՊՊԿ նախագահի արտաքին քաղաքական հարցերով խորհրդական Արկադի Ղուկասյանի երեկ հրապարակված հայտարարության մեջ մասնավորապես նշվում է, որ ԼՂՀ կառավարությունն ըմբռնումով է վերաբերում Հայաստանի խնդիրներին եւ դժվարություններին, սակայն գտնում է, որ «յուրաքանչյուր որոշում ընդունելու ժամանակ հիմնական գործոնը պետք է լինի մեր ժողովրդի անվտանգության երաշխիքները», համազգային շահերի պահպանումը:

ԼՂՀ կառավարությունը, ասվում է հայտարարության մեջ, հույս դնելով Հայաստանի փոխըմբռնման եւ աջակցության վրա, կրկին հաստատում է Ադրբեջանի հետ հակամարտության խաղաղ կարգավորման իր ձգտումը: «ԼՂՀը չի հավակնել եւ չի հավակնում օտար տարածքներին», նշվում է փաստաթղթում: ԼՂՀ պաշտպանության բանակի բոլոր ռազմական գործողությունները պայմանավորված են Ադրբեջանի ագրեսիայով եւ թելադրված հանրապետության բնակչության անվտանգության շահերով, ասվում է հայտարարության մեջ:

ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կարգավորում

ՆԱԽԱՁԵՌՆՈՂՆԵՐԸ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԵՆ ԸՆԴՈՒՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Թուրքիան մեղադրում է հայկական կողմին

«Մայիսի 26-ին Հայաստանի կառավարությունն ու նախագահը մեծ պատասխանատվություն վերցրին՝ ընդունելով 3+1 նախաձեռնության Հայաստանին վերաբերող կետերը»: Այսպիսի հայտարարությամբ հանդես եկավ ՀՀ նախագահի մամուլի քարտուղար Արամ Աբրահամյանը երեկ կայացած մամուլի ասուլիսում:

Անդրադառնալով Հայաստանի պատասխանի միջազգային արձագանքներին, նա նշեց, որ եւ նախաձեռնողները, եւ միջազգային հանրությունը հավանությամբ են ընդունել մեր որոշումը: Հայտնի է, որ Դաշնակցային Ռուսաստանի արտգործնախարարությունը բավարարվածությամբ է ընդունել Ադրբեջանի եւ Հայաստանի պատասխանները, իսկ հակամարտության մյուս կողմի՝ Լեռնային Ղարաբաղի հայերի պատասխանի մասին նշվել է, թե առայժմ նրանք չեն համաձայնվել, ելնելով ինչից բնակչության անվտանգության եւ մասնակիցների կողմից իրենց պարտականությունների կատարման երաշխիքների անբավարարությունից:

Միեւնույն ժամանակ, ՌԴ ԱԳՆ հայտարարության մեջ նշվում է, թե Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը պատրաստակամություն են հայտնել կատարել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 822 բանաձեւը, եթե նույնը կատարի նաեւ հակամարտ կողմը: Մակայն Ադրբեջանը դեռեւս չի պատասխանել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձեւի կատարմանն ուղղված երեք երկրների կոչին: Հայտարարության մեջ նաեւ նշվում է, թե կողմերի հայացքներում նկատվում է առաջխաղացում, եւ բարենպաստ պայմաններ են ստեղծվել արյունահեղությունը դադարեցնելու համար: Կարեւորվում է նաեւ համաշխարհային համակարգող զինվորական հանձնաժողովի ստեղծելու հարցը, հակամարտության բոլոր կողմերի մասնակցությամբ: Մամուլի քարտուղարի կարծիքով, Դաշնակցային Ռուսաստանը չի բացառում, որ նախաձեռնության ձեւը կարող է փոխվել եւ «3+1»-ի փոխարեն կարող է հանդես գալ ԵԱՀԽ Մինսկի խումբը:

Ամերիկայի Միացյալ Նահանգների պատասխանում նույնպես ողջունվում են Հայաստանի ու Ադրբեջանի համաձայնությունները, եւ խաղաղության գործընթացը, որին ԱՄՆ-ը պատրաստ է մասնակցել:

Բացի այդ, ԱՄՆ պետքարտուղարության խոսնակ Բաուչերը հայտարարել է, թե ինքը հասկանում է Ղարաբաղի մտահոգությունը իր ազգաբնակչության անվտանգության եւ բանակի անվտանգության համար: Թուրքիայի պատասխանում, մամուլի քարտուղարի ասելով, բնականաբար փորձեր են արվում «խառնել» Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի հանրապետությունները, եւ Հայաստանին պատասխանատու նկատել նրանում, որ նախաձեռնությունն այս փուլում դեռեւս չի իրագործվել:

Այսօր բոլորի համար պետք է պարզ դառնա, որ Ղարաբաղն ընդունում է ինքնուրույն որոշումներ, ասաց մամուլի քարտուղարը: Կրկին խոսելով Հայաստանի դիրքորոշման մասին, Արամ Աբրահամյանը նշեց, որ Հայաստանն ընդունեց այդ փաստաթուղթը, որպեսզի չկորցնենք հակամարտությունը քաղաքական փուլ տեղափոխելու պատմական հնարավորությունը: Մամուլի քարտուղարը նշեց, թե Հայաստանի իշխանությունները հարգելու են երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մշակված միջազգային նորմերը, որոնք կիսված են համամարդկային արժեքների եւ պատմական փորձի վրա: Այդ առումով նա հայտնեց, թե Հայաստանի քաղաքականությունը ճնշադատող գործիչները չունեն ոչ մի լուրջ փաստարկ:

Տես էջ 8

Իրանում

Օգնություն վթարից զոհվածների ընտանիքներին

ՀՀ կառավարության մամուլի ծառայությունից հայտնեցին, որ կառավարության որոշմամբ 100 հազարական ռուբլի օգնություն ցույց կտրվի 1993 թվականի մայիսի 27-ին Նալբանդ կայարանի մատույցներում տեղի ունեցած երկաթուղային վթարի հետեւանքով զոհվածների ընտանիքներին:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական ապահովության նախարարությանը հանձնարարված է 15 օրյա ժամկետում լուծել վթարի հետեւանքով զոհվածների ընտանիքների անհապաղ սոցիալական տեղափոխությունը կերակրողին կորցնելու կապակցությամբ եւ հաշմանդամ դարձած անձանց հատուցման կենսաթոշակներ նշանակելու հարցը, միաժամանակ օժանդակել հաշմանդամ դարձած անձանց պորտեզաորթոպեդիկ պարագաներով անհապաղ ապահովելու հարցում:

Պարգեւակիրների համապատասխան քաղաքային եւ շրջանային խորհուրդների գործկոմներին հանձնարարված է տեղական բյուջեի միջոցների հաշվին հատուցել զոհվածների թաղման արարողության հետ կապված բոլոր ծախսերը:

Հիշեցնենք, որ վթարը տեղի էր ունեցել մայիսի 27-ին, ժամը 21 անց 30 րոպեին Սոիտակի շրջանի Նալբանդ կայարանի մատույցներում: Փակուղում գտնվող բեռնատար գնացքից պոկված մի քանի վագոններ բախվել են կայարան մուտք գործող Այրում-Գյումրի մարդատար էլեկտրագնացքին: Նախնական տվյալներով, զոհվել է 29 եւ վիրավորվել մոտ հարյուր մարդ: Շատերը մահացել են հիվանդանոցում: «Ազգ»

Ճակատ

Ղարաբաղում եւ սահմաններում իրադրությունն անփոփոխ

Մայիսի 30-ի երեկոյան եւ լույս 31-ի գիշերը ադրբեջանական կազմավորումները Ֆիզուլու շրջանի ռազմական հենակետերից տանկերից, ականանետերից եւ հետեւակի մարտական մեքենաներից զանգվածային հրետակոծության են ենթարկել Մարտունի շրջկենտրոնը, ինչպես նաեւ շրջանի նարտար գյուղն ու Հադրութի շրջանի սահմանամերձ բնակավայրերը: Այս մասին Ստեփանակերտից հաղորդում է մեր թղթակից ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ, վկայակոչելով ԼՂՀ պաշտպանության բանակի շտաբից ստացված տեղեկությունները: Նախնական տվյալներով, հայկական կողմից տուժածներ չկան: Հայկական ուժերն այս անգամ եւս ձեռնպահ են մնացել պատասխան գործողություններից: ԼՂՀ ռազմաճակատի մյուս հատվածներում նույնպես հանգիստ եւ նախորդ գիշեր արձանագրվել են առանձին կարճատեւ գնդակոծություններ: Գնդակոծվել են նաեւ Լաչինի մարդասիրական միջանցքի հարավային մատույցների հայկական դիրքերը: Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ճանապարհը գործում է անխոչընդոտ:

Ադրբեջանական աղբյուրների համաձայն, անցած երկու օրերի ընթացքում Ղարաբաղի տարածքից հրետակոծվել են Ագդամի եւ Ֆիզուլու շրջանների սահմանամերձ բնակավայրերը: Տուժածների եւ ավերածությունների մասին տեղեկություններ չեն հաղորդվում: Ըստ նույն աղբյուրների, Հայաստանի տարածքից հրետակոծվել են Ադրբեջանի սահմանամերձ Ղազախի, Ղազախի եւ Գետաբեկի շրջանների բնակավայրերը:

Մինչդեռ, Հայաստանի պաշտպանության նախարարության լրատվական ծառայության տվյալներով, մայիսի 30-ին եւ լույս 31-ի գիշերը հայ-ադրբեջանական սահմանում ռազմական որեւէ լուրջ միջադեպ չի արձանագրվել:

«Ազգ»

«Վաշինգտոն պոստի» մեկնաբան Հոնգլենդը ամերիկյան հետախուզության հետեւությունները վկայակոչելով գրում է, «Ուկրաինան մտադիր է իր օդերակիր վերահսկողության տակ առնել սեփական տարածքում գտնվող 176 միջմայրցամաքային միջուկային հրթիռները եւ հավանաբար կկարողանա այդ նպատակին հասնել 12-18 ամսում: Հետախուզության գաղտնի տվյալները, որոնք շրջանառության մեջ են դրվել ԱՄՆ կառավարության ամենավերին պորտներում, ԱՄՆ-ին ստիպում են վերանայել այն փորձերը, որոնց նպատակն է Ուկրաինային հարկադրել կատարելու միջուկային սպառազինություններից ազատվելու ավելի վաղ տված նրա խոստումը: Ամերիկացի ներկայացուցիչները համոզված են, որ Ուկրաինայի քաղաքական ղեկավարությունը մեջ պատրաստ է տեղի ունենալ այդ հարցի առթիվ եւ որ դեռեւս հնարավոր է այդ ղեկավարությանը համոզել երկիրը միջուկազերծ պետություն դարձնելու անհրաժեշտության մեջ: ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Դրեկիս

Չինաստանը թելադրանք չի հանդուրժի

ԱՄՆ նախագահ Բ. Քլինթոնի այն որոշման կապակցությամբ, թե Չինաստանին ԱՄՆ-ի հետ առեւտրում առավել բարենպաստման ռեժիմ կտրամադրվի Չինաստանի կողմից մի շարք քաղաքական եւ այլ պահանջների կատարման պայմանով, ՉԺՀ արտգործնախարարությունը տարածել է հայտարարություն, որտեղ մասնավորապես ասվում է. «ԱՄՆ-ի հետ կատարվող առեւտրում Չինաստանին պայմաններով վերադարձված առավել բարենպաստ ռեժիմի տրամադրումը համատեղ չին-ամերիկյան հայտարարությունների եւ երկու երկրների առեւտրի համաձայնագրի սկզբունքների բացահայտ խախտում է, լուրջ միջամտություն Չինաստանի ներքին գործերին: Չինաստանի կառավարությունն իր լուրջ անհամաձայնությունն է արտահայտում ԱՄՆ-ի այդ քայլի առթիվ եւ բողոք է հայտնում ԱՄՆ կառավարությանը:

Չինաստանը համաձայն չէ առեւտրի խնդիրը քաղաքականացնելու ԱՄՆ վարչակազմի դիտավորությանը: Եթե Վաշինգտոնը պնդի իր ասածը, ապա դա կարող է լրջորեն խարխլել չին-ամերիկյան հարաբերությունները, նրանց առեւտրատնտեսական գործակցությունը եւ վերջին հաշվով վնասել հենց Միացյալ Նահանգների շահերին»:

ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՌ-ՏԱՍՍ

digitised by A.R.A.R.@

Երեւան

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՀԱՆԴԵՍ

Մայիսի 28-ին հայկական ղեսականության վերականգնման 75-րդ տարեդարձի առթիվ Հանրապետության հրապարակում տեղի ունեցավ Հայաստանի զինված ուժերի զորահանդես, որն ընդունեց ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Մանուկյանը: Դիմելով հավաքվածներին, պաշտպանության նախարարն ասաց, թե 75 տարի առաջ, հարյուրամյակների ընդմիջումից հետո, 1918 թվականի մայիսի 28-ին մեր ժողովրդին բախտ վիճակվեց վերականգնել ազգային ղեսականությունը եւ ստեղծել անկախ ղեսություն: Նախարարի ասելով, 1918 թվականին մեր անկախության վերականգնումը դայմանավորված էր Սարդարապատի հաղթանակով, անկախության կորուստը 1920 թվականին՝ ռազմական դարտությամբ:

«Այժմ նույնն է դատկերը՝ մեր ղեսության գոյությունը, ներքին կյանքը, ղեսականության կառուցումը, մեր ժողովրդի ազատությունը եւ աղագան բանակի ձեռքում է, կախված է նրա հաղթանակներից եւ դարտություններից: Եւ մեր ժողովուրդը, որպես ինքնին ղեսություն ստեղծեցին հաղթանակող բանակ, որը մարտնչում է արդարության, ազատության, մեր ազգային իդեալների իրականացման համար», ասաց Վազգեն Մանուկյանը: Պաշտպանության նախարարի ասելով, այն, որ մենք հնարավորություն ունենք խաղաղ դայմաններում հդարտությամբ նշել մեր անկախ ղեսականության վերականգնման տարեդարձը, դարտական ենք այն հերոսներին, որոնք իրենց կյանքը զոհաբերեցին ռազմաճակատներում, հանուն մեր ժողովրդի գոյության ու մեր ազգի հզորացման: Պաշտպանության նախարարը հայտարարեց նաեւ, որ այժմ մենք ունենք հզոր բանակ, համալրված լավագույն տղաներով, խիզախ զինվորներով, եւ այդ բանակը ի վիճակի է հաջողությամբ լուծել բոլոր այն խնդիրները, որոնք նրա առջեւ կդնի մեր ժողովուրդը, մեր ղեսությունը:

Զորահանդեսի հրամանատար, դաշտպանության նախարարի առաջին տեղակալ գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանցի զեկույցից հետո սկսվեց հանդիսավոր մասը, որին մասնակցեցին Հայաստանի զինված ուժերի տարբեր զորամիավորումներ: Հանրապետության հրապարակով անցավ նաեւ ռազմական տեխնիկա: Զորահանդեսին ներկա էին նաեւ հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը, Գերագույն խորհրդի նախագահ Բաբկեն Արարքցյանը, հյուրեր եւ տասնյակ հազարավոր երեւանցիներ: Տարիների ընդմիջումից հետո հայ ժողովուրդը բերեց առաջին անգամ ականատես եղավ իր սեփական բանակի կազմակերպված ու ոգեշունչ երթին: Զորահանդեսից հետո Հայաստանի ղեկավարությունը մասնակցեց համաժողովրդական զրոսանքին:

Ա. Հ.

Պարտադիր

Նոր հրետակոծություններ եւ քարոզչական նախապատրաստություն

Շաբաթ եւ կիրակի օրերին իրադրությունը Լեռնային Ղարաբաղում եւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում շարունակում էր մնալ լարված: Այսդես, չնայած Ադրբեջանի նախագահ Էլչիբեյի այն հայտարարությանը, թե ադրբեջանական կազմավորումները մայիսի 24-ից 29-ը միակողմանիորեն դադարեցնում են կրակը, մայիսի 28-ի երեկոյան եւ լույս 29-ի գիշերը Աղդամի շրջանի ռազմական հենակետերից հրետակոծվել է Ասկերանի շրջանի Սարդարաբեն գյուղը: Տուժածների մասին տեղեկություններ չկան: Շաբաթ օրը զենքի տարբեր տեսակներից, այդ թվում «Գրադ» կայանքներից հրետակոծվել են Մարտակերտի շրջանի սահմանամերձ գյուղերը, ինչպես նաեւ Մարտունու եւ Հադրութի շրջանների հայկական դաշտդանական դիրքերը: ԼՂՀ դաշտդանության բանակի շտաբի տվյալներով, հայկական ուժերն այս անգամ եւս ձեռնդահ են մնացել դասասխան գործողություններից:

Ընդհանրապես, եթե վերջին շաբաթների ընթացքում իրադրությունը խիստ լարված էր հատկապես Ղարաբաղի հարավային սահմանների ուղղությամբ, որտեղ նկատվում էին ադրբեջանական բանակի ռազմական տեխնիկայի եւ կենդանի ուժի մեծ կուտակումներ, ապա վերջին օրերին դրան ավելացավ նաեւ Մարտակերտի շրջանը, որի հյուսիսարեւելքում նույնպես նման կուտակումներ եւ կասկածելի զորաշարժեր են նկատվում: Այս առթիվ ադրբեջանական աղբյուրները հաղորդում են միայն, թե Մարտակերտի շրջանում իրադրությունը կտրուկ սրվել է՝ միաժամանակ տեղափոխվել մի քանի տասնյակ միավոր զրահատեխնիկա եւ վառելիք տեղափոխող բեռնատարներ:

Իրադրությունը շարունակվում էր լարված մնալ նաեւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում: Մայիսի 28-ին Ադրբեջանի Ղազախի շրջանի տարածքից գնդացիրներից եւ ավտոմատներից գնդակոծվել է Իջեւանի շրջանի Սեւքար գյուղը: Բարեբախտաբար տուժածներ չեն եղել: Հայկական ուժերն այս անգամ ձեռնդահ են մնացել դասասխան հակարժեք գործողություններից: Ադրբեջանական աղբյուրների համաձայն, շաբաթ օրը Հայաստանի տարածքից ուժգին հրետակոծության են ենթարկվել Ադրբեջանի Զանգելանի եւ Գետաբեկի շրջանների սահմանամերձ բնակավայրերը: Ըստ նույն աղբյուրների, կիրակի օրը այդ շրջաններին ավելացել է նաեւ Ղուբալին: Տուժածների եւ ավերածությունների մասին տեղեկություններ չեն հաղորդվում:

Ադրբեջանական քարոզչական մեքենայի այն հայտարարությունները, թե Հայաստանից Ղարաբաղ է հասցվել մեծ քանակությամբ զրահատեխնիկա, ենթադրել է տալիս, թե [illegible] հնարավոր է ադրբեջանական բանակի լայնածավալ գրոհ Լաչինի մարդասիրական միջանցքի հարավային մասյացների ուղղությամբ: Այդ են վկայում նաեւ Ղուբալլիի շրջանի հրետակոծության մասին տեղեկությունները: Իսկ եթե հաշվի առնենք նաեւ, որ ԼՂՀ ռազմական ղեկավարությանը խիստ մտահոգություն են դատճառում Մարտակերտի շրջանի նվաճված տարածքներում ադրբեջանական բանակի լուրջ կուտակումները, ապա դարզ է դառնում, որ միանգամայն հիմնավորված էր եռակողմ միջնորդությանը տված Լեռնային Ղարաբաղի դասասխանը, որում նշվում էր, թե Ղարաբաղը Ադրբեջանի ռազմական ռազմագությունից զերծ մնալու բավարար երաշխիքներ չի տեսնում: Բոլոր դեպքերում, Ադրբեջանի վերջին քայլերը ոչ մի կերպ չի կարելի հակամարտության խաղաղ կարգավորման նկատմամբ բարի կամքի արտահայտություն համարել:

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Մոսկվա

Մայիսի 28-ը Սյունաքարդ դահլիճում

Մոսկվայի Միությունների տան Սյունաքարդ դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր երեկույթ: Երեկույթ ունեցան միջոցառումը կազմակերպած տեղի համայնքի ղեկավար Սամվել Գրիգորյանը, նրա հովանավոր, «Գոհար» կոնցեռնի նախագահ Սերժ Ջիլավյանը, գրող Ռոբերտ Բալայանը, ռուս մտավորականության ներկայացուցիչներ: Նշեցին իրադարձության դատմական նշանակությունը Հայաստանի համար: Վերջում տրվեց համերգ: Միջոցառմանը ներկա Մոսկվայի ամեն մի հայ հիանալի էր գիտակցում, որ անկախություն ստացած հայրենիքն առդում է իր դատմության բեկումային շրջաններից մեկը, որ իր բարոյական, քաղաքական ու ֆինանսական օգնությունը կարեւոր նշանակություն ունի Հայաստանի համար:

Դահլիճի հատարակությունն արտացոլում էր մայրաքաղաքի հայ գաղութում նկատվող նոր երեւույթները: Փոխվում է նրա դեմքը, առաջ են գալիս երիտասարդ ուժեր, գործարար մարդիկ, որոնք ակտիվորեն զբաղվում են նաեւ [illegible] նվեր գործունեությամբ: Եւ այս [illegible]տով արժե առանձնացնել Ս. Ջիլավյանին: Մոսկվայի կենտրոնական համերգասրահներից մեկում երեկույթ կազմակերպելը միլիոնների գործ է: Եւ նման քայլի դիմողը ոչ միայն ղիտի «վճարունակ» լինի, այլեւ տոգորված ազնիվ հայրենասիրությամբ: Երեկույթ են ունենում ռուսական էստրադայի ճանաչված ներկայացուցիչներ Ալեքսանդր Այվազովը եւ Իրինա Օսիեւան, ու բոլորի համար անսդասելիորեն երգում են... հայերեն, հդարտորեն դատմում իրենց արմատների մասին: Եւ բնական է, որ երբ Օսիեւայի ջազային իմդրովիզացիայի տակ բեմ լցվեցին սեւաչ հայ մանուկները (շատերը մեծերի օգնությամբ), ու մոռանալով, որ ծաղիկներ դիտի նվիրեն երգչուհուն, սկսեցին ոիքմի տակ դարել, դահլիճը հուզվեց...

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մեր սեփ. թղթակից, Մոսկվա

Երեւան

Հայաստանի անկախության օրը Ուկրաինայում

Կիեւի Գեղարվեստի տանը տեղի ունեցավ երեկո նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության օրվան: Այն համատեղ կազմակերպել էին Կիեւի հայկական եւ Ուկրաինա-Հայաստան մշակութային միությունները: Մասնակցում էին հայ համայնքի, տեղի նշանավոր գործիչներ: Ուկրաինա-Հայաստան ընկերության նախագահ Ա. Բոժկոն, գրող, բարգմանիչ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Վ. Կոչեւսկին, քաղխորհրդի դատգամավորներ Ն. Կուլիկը, Ե. Կլիմենկոն, Օ. Գլոն (վերջիններս տարբեր ժամանակներում եղել են Ղարաբաղում՝ բերելով մարդասիրական օգնություն, իսկ Ուկրաինայում ներկայացրել ճշմարտությունը Ղարաբաղի մասին), մշակույթի նախարարության, ազգամիջյան հարաբերությունների կոմիտեի, «Ուկրաինա» ընկերության աշխատողներ, քաղաքի մյուս ազգային ընկերությունների ներկայացուցիչներ:

Երեկոյին մասնակցում էր Ուկրաինայում ՀՀ մշակական ներկայացուցիչ Հրայրյա Սիլվանյանը: «Հայոց ղեսականության վերականգնման օրվան նվիրված երեկոն վերածվեց հայ-ուկրաինական բարեկամության իսկական տոնի», նշեց Կիեւի հայ մշակութային միության նախագահ Վիոլետա Խալատուրովան: Երեկոյի վերջում կայացավ համերգ Ուկրաինայի արվեստի վաստակավորների եւ տեղի հայ համայնքի անհատ կատարողների մասնակցությամբ: Հայաստանի Հանրապետության անկախության օրվա առթիվ առանձին հաղորդում տրվեց Ուկրաինայի հեռուստատեսությամբ, որին մասնակցեցին Ալեքսանդր Բոժկոն, Վիկտոր Կոչեւսկին, Վիոլետա Խալատուրովան, Հրայրյա Սիլվանյանը: Ցուցադրվեց հայ համայնքի դատվերով նկարահանված Տ. Նախիմովիչի «Հայկական եկեղեցի» վավերագրական ֆիլմը (նվիրված Լվովի հայկական եկեղեցուն):

Ի դեդ, Կիեւի հայ համայնքը այս տարի փետրվար-մարտ ամիսներին հանգստանալու էր հրավիրել 50 երեխաների Ղարաբաղից, իսկ փետրվար-մարտ ամիսներին Կիեւի «Անուշ» ընկերության աջակցությամբ հյուրընկալեց եւս 30 երեխաների:

ՋԻՎԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՌԱԿ

Հանդիպում Հանրապետական վարչությունում

Մայիսի 24-ին Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության Հանրապետական վարչության գրասենյակում տեղի ունեցավ վարչության ատենապետ Ռուբեն Միրզախանյանի եւ փոխատենապետ Կարեն Կոստանդյանի հանդիպումը Հայաստանի Դեմոկրատական կուսակցության նախագահ Արամ Սարգսյանի եւ նախագահի տեղակալ Գագիկ Սարգսյանի հետ: Հանդիպման ընթացքում տեղի ունեցավ մտքերի փոխանակում՝ հանրապետությունում ստեղծված ներքին քաղաքական իրավիճակի շուրջ:

Դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչները կարեւորեցին հանրաքվեի անցկացման անհրաժեշտությունը եւ այդ կապակցությամբ անհրաժեշտ 200 հազար ստորագրությունների հավաքումը: Արամ Սարգսյանը տեղեկություններ հաղորդեց կուսակցության դատվիրակության աշխատանքների մասին [illegible] Ալմա Աթայում տեղի ունեցած սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների միջազգային հավաքին:

ՀՌԱԿ ներկայացուցիչների կողմից կարեւորվեց ժողովրդավարական ուժերի փոխհարաբերությունների ամրապնդման անհրաժեշտությունը: ՀՌԱԿի եւ Դեմոկրատական [illegible] կուսակցության ղեկավարները լուրջ անհանգստություն հայտնեցին Հայաստանում հակաժողովրդավարական միտումների որոշ դրսեւորումների նկատմամբ, ինչպես նաեւ կառավարության կողմից ծմեռվա նախապատրաստման աշխատանքներում տվյալ վիճակի ուղղությամբ: Նպատակահարմար համարվեց հանդիպումներ կայացնել դարբերաբար:

Միջազգային

Լոնդոնում ստորագրվեցին հայ-բրիտանական համաձայնագրեր

ՀՀ կառավարության մամուլի ծառայությունից տեղեկացրին, թե շարունակվում է Հայաստանի Հանրապետության դաշտվիրակության դաշտոնական այցելությունը Մեծ Բրիտանիա: Մայիսի 27-ին վարչապետ Հրանտ Բագրատյանն այցելեց Բրիտանական արդյունաբերության կոնֆեդերացիա: Հանդիպման ընթացքում նա ներկայացրեց Հայաստանի ներկա տնտեսական կացությունը, իրագործվող բարեռեֆորմների ընթացքը:

ՀՀ կառավարության գործերի կառավարիչ Արմեն Խաչատրյանը եւ մամուլի քարտուղար Վլադիմիր Մանոյանն այցելեցին Բրիտանական խորհուրդ, որտեղ նրանց ընդունեց գլխավոր տնօրենի խորհրդական Է. Մարդսենը: Նա հակիրճ ներկայացրեց այդ ոչ կառավարական կազմակերպության նպատակները եւ խնդիրները, որոնք ուղղված են մշակույթի, գիտության եւ կրթության (հատկապես անգլերենի ուսուցման) բնագավառներում համագործակցության ընդլայնմանն ու զարգացմանը: Համաձայնություն ձեռք բերվեց, որ Հայաստանի հանրապետական նախարարությունների հետ դայմանավորվածությունից հետո Բրիտանական խորհրդի Մոսկվայի ներկայացուցիչը կայցելի Հայաստան:

Այնուհետեւ դաշտվիրակությունը եղավ Ադամ Սմիթի անվան տնտեսագիտության ինստիտուտում, ապա Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարությունում հանդիպում ունեցավ փոխնախարար Դագլաս Հոգի հետ, որի ընթացքում քննարկվեցին դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը վերաբերող հարցեր:

Հայաստանի Հանրապետության վարչապետ Հրանտ Բագրատյանը, ՀՀ արտաքին գործերի նախարար Վահան Փափազյանը եւ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Դագլաս Հոգը ստորագրեցին հետեւյալ փաստաթղթերը.

1. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Մեծ Բրիտանիայի ու Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության միջեւ ներդրումների խրախուսման եւ դաշտպանության վերաբերյալ:

2. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Մեծ Բրիտանիայի ու Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության միջեւ տեղաշարժման անսահմանափակ ազատության մասին:

3. Համատեղ հռչակագիր Հայաստանի Հանրապետության եւ Մեծ Բրիտանիայի ու Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարությունների միջեւ տնտեսական համագործակցության վերաբերյալ:

4. Հռչակագիր Հայաստանի Հանրապետության ու Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտաքին գործերի նախարարությունների միջեւ:

Ստորագրման դաշտոնական արարողությունից հետո շուրջ մեկժամյա զույգ տեղի ունեցավ վարչապետ Հրանտ Բագրատյանի, արտգործնախարար Վահան Փափազյանի, Մեծ Բրիտանիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Արմեն Սարգսյանի եւ Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Դագլաս Հոգի միջեւ: Փոխըմբռնման դայմաններում կարծիքների փոխանակություն տեղի ունեցավ շրջանում ստեղծված իրավիճակից դուրս գալու հնարավոր լուծումների շուրջ:

Փաստորեն նույն խնդրի քննարկման շարունակությունն էր վարչապետի հաջորդ հանդիպումը, որը տեղի ունեցավ Թագավորական [illegible] Ինստիտուտում:

«Ազգ»

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում Եգիպտոսի դեսպանատունը փնտրում է երկհարկանի բնակելի շենք (բնակության համար), ավտոնակով՝ Երեւանի կենտրոնում:

Ցանկալի է առաջին հարկում մեծ ընդունարան եւ երկու միջին չափի սենյակ, երկրորդ հարկում՝ չորս սենյակ:

Զանգահարել. 53-15-33

Եգիպտոսի դեսպանատուն

digitised by A.R.A.R.@

Նյու Յորք

ՀԵՐՐԻ ԳԻԼՄՈՐԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ



Ձախից աջ՝ Ամերիկայի Արեւելյան Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամյանը, «Խղճմտանքի կոչ» հիմնարկության ատենապետ ռաբբի Արթր Շնայերը, դեսպան Հերրի Գիլմորը եւ նրա տիկինը՝ Գերալը

Հայաստանում Ամերիկայի նոր դեսպան Հերրի Գիլմորի պաշտոնի տրված ընդունելության ընթացքում դեսպանն անթերի հայերենով կատարեց հետեւյալ հայտարարությունը. «Ես ուզում եմ շեշտել, որ մենք Հայաստան ենք մեկնում եւ մեծ ակնկալիքներ ունենք այդ պատասխանում մեր աշխատանքից: Հաջողություն եմ մաղթում ձեզ եւ Հայաստանին»:

Դեսպանը, որ 30 տարի ծառայել է դիվանագիտական մարզում, Հայաստանի Հանրապետության առաջին ամերիկյան դեսպանը նշանակվեց: Նա ելույթ ունեցավ մայիսի 13-ին Նյու Յորքի Առաջնորդարանի կողմից կազմակերպված ընդունելության ժամանակ, որին ներկա էին 125 հրավիրյալներ: Ընդունելությունը տեղի ունեցավ Ամերիկայի արեւելյան թեմի Հայաստանյայց եկեղեցու առաջնորդ գերշ. տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի հովանավորությամբ:

Գերշ. տ. Խաժակ արքեպիսկոպոսը բարձր գնահատեց ամերիկյան կառավարության Հայաստանին տրամադրած մարդասիրական օժանդակությունը: «Խղճմտանքի կոչ» հիմնարկության ատենապետ ռաբբի Արթր Շնայերը անդրադարձավ հայ եւ հրեա ժողովուրդների կրած վարձքություններին: «Դեսպան Գիլմորի նշանակումը որպես Հայաստանի դեսպան մեր ջերմեռանդ աղոթքների արդյունքն է, որովհետեւ նա օժտված է իմաստությամբ եւ մեծասրտությամբ: Նա ոգի հանդիսանա բարեկամության ճարտարապետ»: Ռաբբի Շնայերն իր խոսքը եզրափակեց հայերեն, «կենաց» մաղթելով դեսպան Գիլմորին: ՄԱԿ-ում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Ալեքսանդր Արզումանյանը շնորհավորեց նոր դեսպանին եւ վստահություն հայտնեց, որ Ամերիկայի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունները ավելի կամրապնդվեն: Նա երախտագիտությամբ արտահայտվեց մարդասիրական օգնության եւ խաղաղության համար Ամերիկայի ցանքերի վերաբերյալ եւ շեշտեց Մինսկի համաժողովի դերը եվրոպական պետությունների միջոցով Հայաստանի եւ Ղարաբաղի խնդրում լուծում գտնելու գործում: Վերջում ելույթ ունեցավ հյուրը: «Ես երկար ժամանակ սպասում էի Հայաստան իմ այցելությանը», ասաց դեսպան Գիլմորը, հայտնելով, թե «ոգեւով» է ունեցել այս պաշտոնում նշանակվել երկու անգամ, նախկին նախագահ Բուշի եւ այժմյան նախագահ Քլինթոնի կողմից: Նա անդրադարձավ 1972 թ. Հայաստան կատարած իր առաջին այցելությանը: «Այդ այցելությունից երկու հուշ դրոշմվեց մտքումս, խորապես տպավորվեց հայ ժողովրդի հնադարյան եւ հարուստ մշակույթը»: Վստահ չեմ, թե Հայաստանի դժվարությունները վերջ կդնեն մոտ առյագայում, ասաց դեսպանը: Նա եւս հոդարտությամբ խոսեց ամերիկյան կառավարության ընձեռած օժանդակության մասին: «Հուսով եմ, որ ամերիկյան կառավարությունը կենտրոնական դեր կխաղա Ղարաբաղի խնդիրը լուծելու հարցում, շեշտեց նա: Ես տեղյակ եմ, ավելացրեց դեսպանը, որ Ամերիկան իր դեսպանին դեռ չէր ուղարկել Հայաստանի առաջին հանրապետություն, երբ այն կոլ գնաց քաղաքական վայրիվերումներին: Այժմ բարեխղճությամբ եմ կատարում այդ պարտքը», հաստատեց նա: Ամերիկյան դեսպանը ներկաների ուշադրությունը հրավիրեց այն հարցին, որ կարող են կարճ տեւողությամբ շրջաններ լինել, երբ ամերիկյան եւ հայկական կառավարությունները ներդաշնակորեն չընթանան, բայց կարեւոր է նկատի ունենալ, որ «բարեկամների միջեւ եւս պատահում են վոնթր տարակարծություններ, որոնք լուծվում են դրականորեն»: Ապա որպես հաճելի անակնկալ ամերիկյան դեսպանը, որ խոսում է չորս լեզուներով եւ արդեն մի քանի ամիս հայերեն է սովորում եւ կարող է նույնիսկ եղիշե Չարենց արտասանել, իր խոսքը եզրափակեց կատարյալ արեւելահայերենով. «Ուզում եմ խոսքս վերջացնել շեշտելով, որ մենք Հայաստան ենք մեկնում մեծ ակնկալիքներով: Հաջողություն ձեզ եւ հաջողություն Հայաստանին»: Այս բացառիկ հավաքույթը իր լրումին հասավ Կանադայի հայոց առաջնորդ գերշ. տ. Հովնան արք. Տերտերյանի կողմից ճաշկերույթի սեղանի օրհնությամբ:

ՖԼՈՐԱՆՍ ԱՎԱԳՅԱՆ
Նյու Յորք

Երեկ, մայիսի 31-ին Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան Հարրի Գիլմորը հավատարմագիր հանձնեց Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին:

Իրավունք

Մ. Անսենը ԱՄԲ գլխավոր տնօրեն: Աշխատանքի միջազգային բյուրոյի գլխավոր տնօրեն Միշել Անսենը (Բելգիա) այդ պաշտոնում վերընտրվել է հերթական հնգամյա ժամկետով: Ընտրությունը տեղի է ունեցել աշխատանքի միջազգային կազմակերպության վարչական խորհրդի ժնեւում անցկացվող նստաշրջանում: Նիստում ելույթ ունենալով էվերկության արդյունքների հայտարարումից հետո, գլխավոր տնօրենը հայտարարեց, որ իր խնդիրն է համարում աշխատանքի միջազգային կազմակերպության վարկի եւ արդյունավետության հետագա բարձրացումը, որը ներկայումս միավորում է 162 պետություն եւ ՍՍԿ-ի առաջատար մասնագիտացած հաստատությունն է աշխատանքի եւ զբաղվածության բնագավառում:

ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՌՏՍՍՍ

Երեւանում գործում է 10-12 հասարակաց տուն: Ինչպես հայտնեց ՀՀ ՆԳՆ թմրաբիզնեսի եւ թմրամոլության դեմ պայքարի վարչության պետ Սերգեյ Ասլանյանը, ներկայումս Երեւանում գործում է 10-12 հասարակաց տուն, յուրաքանչյուրում 18-35 տարեկան 6-9 պոռնիկ: «Ծառայությունների» դիմաց վարձը տարբեր է 25-ից մինչեւ 50 հազար ռուբլի:

ՆՏ

Կարդացեք այս գիրքը

Հայաստանի Ամերիկյան համալսարանը նախաձեռնել է ամերիկյան լավագույն գրողների «Գործարարություն» մատենաշարի հրատարակությունը հայերեն լեզվով: Լույս է տեսել այդ շարքի առաջին գիրքը՝ Փ. Հոթենի «Ինչպես վարել սեփական գործը», որը բովանդակում է կարեւոր խորհուրդներ գործարար մարդկանց համար՝ ինչպես սկսել եւ վարել սեփական գործը, ինչպես հարստանալ եւ խուսափել սնանկանալուց, ամերիկյան փորձառու գործարարի հաջողության գաղտնիքները: Պահանջեք գիրքը բոլոր գրախանութներում եւ կրպակներում:

Մշակույթ

Պատարագը մատուցվեց մշակույթի պալատում

Մայիսի 29-ին Սեւանի վանքի հոգեւոր հովիվ եւ Այրարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանի օգնական Աբանաս աբեղա Մովսիսյանը պատարագ մատուցեց նվիրված Անկախության օրվան եւ Սուրբ հոգու գալստյան տոնին: Երկար տարիների արգելքներից հետո Սեւանի շրջանում առաջին անգամ կատարվեց նման եկեղեցական արարողություն, բայց ցավալի է, որ այն տեղի ունեցավ ոչ թե հատուկ աղոթքի տան՝ եկեղեցու մեջ, այլ քաղաքի մշակույթի պալատի դահլիճում:

Ավագանում արդեն գործում են Բայազետի եւ Վարդենիսի եկեղեցիները, բացառությամբ Սեւանի շրջանի, որտեղ գործող եկեղեցի չլինելու եւ Սեւանի վանքի հեռավորության պատճառով եկեղեցական ծիսակատարություններ չեն կատարվում: Իսկ դա նպաստում է այն հանգամանքին, որ օր օրի սվարանում են ուղղափառականների, հրեականների եւ այն աղանդավորականների շարքերը, որոնք պառակտում են մտցնում, հակառակ են հայ ժողովրդի եւ Ավետարանի ոգուն: Աբանաս աբեղա Մովսիսյանը նշեց, որ նման պայմաններում հույժ անհրաժեշտ է 24 հազարանոց քաղաքի եւ իր շրջապատի համար եկեղեցի կառուցել, որը հնարավորություն կտա կատարել բոլոր ծիսակատարությունները, ամրապնդել ժողովրդի հավատն առաքելական եկեղեցու նկատմամբ եւ պայքարել պառակտիչ աղանդավորական շարժումների դեմ: Հոգեւոր հովիվն արդեն դիմել է Առաջնորդ սրբազան հորը՝ Գարեգին արքեպիսկոպոսին, սիրտոքում այս գործին աջակցելու նպատակով բարեհաճեր գտնելու համար: Աբանաս աբեղայի ուժերով ստեղծվելու է հանձնաժողով, որը զբաղվելու է այս հարցերով: Սեւանը եւ նրա վանքը տարիներ շարունակ ուխտատեղի են եղել՝ պետք է նորից վերականգնեն իր նշանակությունը հայ ազգային եւ հոգեւոր նշանակությունը հայ ժողովրդի կյանքում:

ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«Խաչ ու սուր» քանդակախումբ Սեւանի ափին

Մայիսի 28-ին, Հայաստանի պետականության վերականգնման օրը, Սեւանի ափին, բլրի վրա, հանդիսավոր պայմաններում բացվեց մեր ժողովրդի ազատագրական պայքարի հերոսությունը փառաբանող բազալտակուռ մի քանդակախումբ: Հավաքվել էր հոծ բազմություն Հայաստանի գրեթե բոլոր շրջաններից, արտասահմանից: Արձանախմբի հեղինակն է Լեւոն Թորոսաջյանը, որի տաղանդի հերթական դրսեւորումներից է այս մեծածավալ ստեղծագործությունը: Առաջին պլանում կանգնած է որդեկորույս մայրը, հոյակապ ու անեղծ: Եռին պլանում, արծվի նման ժայռին հառնել է այսօրվա եւ բոլոր ժամանակների ազատամարտիկը, որի թեւի տակ գալիքի գանգրահեր մանուկն է, գլխից վեր պահած բռնազբաղ խաչը, ավետելով սերունդներին, թե որ խաչն ինքդ պիտի պահես, եւ եթե հարկ լինի, սուր դարձնես այն: Հուշարձանի ճարտարապետն է Ժիրայր Պետրոսյանը, հովանավորն ու կառուցողը Երեւանի «Էրեբունի» տեխսիլ ասոցիացիան միավորումը, տնօրեն Փայլակ Հայրապետյան:

«Ազգ»

Երեկ, մայիսի 31-ին Իսպանիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Էուխենիո Ուրեգոլաս Օրիոլան իր հավատարմագիրը հանձնեց Հայաստանի Հանրապետության փոխնախագահ Գագիկ Հարությունյանին:

Կարծիք

Ստորագրություններ հանրաքվեի օգտին

Հայաստանի Հանրապետական կուսակցության խորհրդի նախագահ, ՀՀ նախագահի եւ ՀՀ Գեր լիազորությունների դադարեցման եւ ժամանակավոր կառավարության՝ պետական խորհրդի ընտրման հանրաքվեն նախաձեռնող խմբի անդամ Սիմոն Շահազիզյանը հայտնեց, որ հանրաքվեի թույլատրման համար անհրաժեշտ 200 հազար ստորագրությունների հավաքումը շարունակվում է եւ որ ամենայն հավանականությամբ մինչեւ օգոստոսի 6-ը (ստորագրությունների հավաքման ժամկետի վերջին օրը) ստորագրությունների անհրաժեշտ քանակը անդայման կդադարվի: «Մենք ցանկանում էինք հեռուստատեսությամբ հանրաքվեի առթիվ քարոզչություն կազմակերպել, սակայն հեռուստաընկերությունը ղեկավարությունը մերժեց, դատճառաբանելով, թե հեռուստաժամը տրվում է կուսակցությանը, այլ ոչ թե հանրաքվեի նախաձեռնող խմբին», ասաց Շահազիզյանը:

Նախաձեռնող խմբի մեկ այլ անդամ, Հայաստանի Դեմոկրատական կուսակցության նախագահ Արամ Սարգսյանն ասաց, որ հանրաքվեն կազմակերպող նախաձեռնող խմբին դատարանում միացել է Ազգային ինքնորոշում միավորումը եւ ակտիվորեն ընդգրկվել 200 հազար ստորագրությունների հավաքման աշխատանքներին, որը կատարվում է նաեւ փողոցներում: Այդ աշխատանքները սկսվել են Գյումրիում, Վանաձորում, ընդգրկվել են նաեւ Ջանգեզուրը, Մարտունին, Հրազդանը, Չարենցավանը, Արարատյան դաշտավայրը: «Երբեմն տեղի են ունենում զավեշտներ. Վանաձորի քաղխորհրդի տեղակալ Մանուկյանը ասում է, որ բանկերը, որոնց կնիքից հետո միայն կարող են հավաքվել ստորագրությունները, կկնքվեն ստորագրությունների հավաքումից հետո: Զարմանալի է նաեւ իշխանությունների անտարբեր վերաբերմունքը այս կարեւոր իրադարձությունների», ասաց Սարգսյանը:

ՆՏ

ԼՂՀ-ից բռնագաղթվածները դադարել են գրանցվել

Երեւանի Մյասնիկյանի շրջխորհրդի գործկոմի փախստականների հարցերով տեսուչ Գայանե Սարգսյանը հայտնել է, որ գործկոմում գրանցվել են ԼՂՀ-ից 682 բռնագաղթվածներ, Շահումյանի շրջանից՝ 168, իսկ Բաքվից՝ 1685: ԼՂՀ-ից եւ Շահումյանի շրջանից բռնագաղթվածների գրանցումը դադարեցված է 1993 թ. մարտի 1-ից, իսկ Ադրբեջանից փախստականները շարունակում են գրանցվել:

ՆՏ

ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ՄԵՆՔ

Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախումբը (Հ.Ֆ.Ն) Գյումրիի մշակույթի կենտրոնը (Գ. Մ. Կ.)

Տոնում են Արամ Խաչատրյանի 90-ամյա հոբելյանը:

Հունիսի 6-ին

ժ. 11-ից. Կոմիտասի անվան այգի (պանթեոն)

Համերգ-արարողություն

Մասնակցում է

Գ. Մ. Կ.-ի երգչախումբը

Գլխավոր ղեկավար եւ գլխավոր դիրիժոր
Ռոբերտ Մլեքյան

ժ. 14-ին. Անկախության հրապարակ (Թատերական)

Տոնական համերգ

Մասնակցում են

Գ. Մ. Կ.-ի պարի համույթը

Գեղարվեստական ղեկավար՝
Աղասի Շաքոյան

եւ **Գ. Մ. Կ.-ի փողային նվագախումբը**

Գեղարվեստական ղեկավար՝
Գեորգի Կոտոյան

ժ. 17-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահ

Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախումբ

Դիրիժոր՝
Լորիս Ճգնավորյան

Հ. Ֆ. Ն.-ի համերգի տոմսերը վաճառվում են «Արամ Խաչատրյան» համերգասրահի տոմսարկղում ժ. 11-ից 18-ը:

«Արամ Խաչատրյան»

Ֆիլհարմոնիկ համերգասրահ

«Աշխարհը եւ մենք»

Սիմֆոնիկ երաժշտության ամառային փառատոն

Արամ Խաչատրյան - 90

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն
Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախումբ

Հունիսի 3-ից - հունիսի 6-ը

Գալա համերգներ

3.06 Կամերային երաժշտության համերգ

4.06 Սիմֆոնիկ երաժշտության համերգ

Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախումբ

Դիրիժոր՝ Լորիս Ճգնավորյան

5.06 Արամ Խաչատրյանի երաժշտությունը ֆիլմերում

կ/թ «Մոսկվա»
«Այգի»

6.06 Սիմֆոնիկ երաժշտության համերգ

Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախումբ

Դիրիժոր՝ Լորիս Ճգնավորյան

Գալա համերգների գեղարվեստական ղեկավար ՀՖՆ-ի եւ ԵՍՆ-ի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր՝ Լորիս Ճգնավորյան

Սկիզբը ժամը 17:00-ին: Տոմսերը վաճառվում են «Արամ Խաչատրյան» համերգասրահի եւ կ/թ «Մոսկվա»-ի տոմսարկղերում:

digitised by A.R.A.R.@

Վերլուծություն

ԻՆՉ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԲԱԺԻՆ ԿՀԱՍՆԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

Անցյալ տարի Յոթնյակի երկրները՝ ԱՄՆ, Ճապոնիան, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան եւ Կանադան խոստացան Ռուսաստանին 24 մլրդ դոլլարի օգնություն ցույց տալ, որից տրամադրվեց միայն 13 մլրդ.: Վարկավորման պայմանները խիստ ճնշադաստության ենթարկվեցին, քանի որ տրամադրված վարկերը Ռուսաստանի հյուծված տնտեսությանն «օգնելու» համար շատ ծանր պայմաններով էին տրվում եւ անիրատեսական էին: Դրանից բացի, տրամադրվելիք վարկերի հատկացման համար պարտադիր պայման էր այն ժամանակ աղեն Ռուսաստանում առկա ներքին քաղաքական բազմաճյուղ հակամարտության բացակայությունը:

Նախկին ծրագիրը, որի գլխավոր հեղինակը Միջազգային վալյուտային հիմնադրամն էր (ՄՎՀ), նախատեսում էր լուծել ծանր տնտեսական այնպիսի հարցեր, որոնց բերեւացումը դրական ազդեցություն կարող էր ունենալ առաջին հերթին կառավարության կառույցների վրա, իսկ երկրի բնակչությունը դրանք կարող էր զգալ լավագույն դեպքում մի քանի տարի անց: Օրինակ, հատկացված վարկերի առյուծի բաժինն օգտագործվեց տնտեսական վերակառուցման, բյուջեի դեֆիցիտի կրճատման, դրամական զանգվածի աճի բուլացման եւ այլ նման տնտեսական ծրագրերի իրագործման համար: Իսկ սրանք արդյունք կտային միայն այն դեպքում, եթե ծրագրերի հաջող ընթացքի հետեւանքով հաջողվեր սանձել արժեզրկումն ու տնտեսական փլուզումը, հասնել բնակչության կենսամակարդակի աճին:

Այս տարվա ապրիլի 15-ին Յոթնյակը մինչ այդ հայտարարված 15 մլրդ դոլլար պարտքի վճարման ժամկետը երկարաձգելուց բացի, խոստացավ արտոնյալ պայմաններով տրամադրել եւս 28.4 մլրդ դոլլարի վարկ: Այս անգամ ֆինանսները նախատեսվում են տրամադրել այն բնագավառներում, որոնք անմիջապես կազդեն մարդկանց առօրյայի վրա:

Օգնության այս խոստումը Ռուսաստանում փետրվարից մինչեւ ապրիլի կեսերը տված ահռելի ներկայացման պատասխանն էր: Սակայն այն նախորդ խոստումների նման կարող է մնալ զուտ որպես խոստում: Որպես օգնության զգալի մասը ստանալու նախադայման առաջ է քաշվել Ռուսաստանի կառավարության կողմից դրամական զանգվածի աճի կայունացումն ու սեփականաշնորհման քաղաքականության շարունակումը: Փաստորեն առաջին նախադայմանն իր տրամաբանությամբ լրիվ հակասում է անցյալ տարվա նույն Յոթնյակի առաջ քաշած կարեւորագույն պայմաններից մեկին՝ գների ազատ արձակմանը: Ողջ 1992 թ. Ռուսաստանի կառավարությունից Արեւմուտքը անընդհատ պահանջում էր ազատ արձակել էներգակիրների, մասնավորապես նավթի ու գազի գները: Եւ ամեն անգամ, երբ Գայդարի կառավարությունը տեղի էր տալիս եւ հերթական անգամ թանկացնում էր էներգակիրների գները, անմիջապես գրանցվում էր արժեզրկման հերթական կտրուկ աճ: Արդյունքում՝ մեկ-երկու շաբաթվա ընթացքում էներգակիրների գներն արժեզրկման շնորհիվ համաշխարհային գներից հեռանում էին ճիշտ այնքան, ինչքան մինչեւ թանկացումն էին: Այնպիսի տպավորություն էր ստեղծվել, թե Գայդարը հայտնվել է էներգակիրների գների եւ ռուբլու զանգվածի փակ շրջանում, եւ այդ շրջանի ամեն պտույտով ավելի է խորանում երկրում մոլեգնող տնտեսական ճգնաժամը: Փաստորեն էներգակիրները համաշխարհային գներին հասցնելու յուրաքանչյուր փորձ ավարտվում էր նրանով, որ ավելանում էր ռուբլու զանգվածը:

Երբ Չեռնոմիրդինի կառավարությունն այս տարի էլ փորձի հանում խոստացված օգնության կտրուկ միջոցներով կայունացնել ռուբլու զանգվածը, իսկ խոստացած օգնությունն ուշանա (ինչպես դա լինում էր անցյալ տարի), Ռուսաստանը կարող է կանգնել դրամի խիստ դեֆիցիտի փաստի առջեւ, որն ահռելի երկրի տնտեսությանն ու բնակչությանն ավելի ծանր վիճակի կհանգեցնի:

Մայիսի 20-ին Ռուսաստանի կառավարությունն ու կենտրոնական բանկը հանդես եկան 1993 թ. տնտեսական քաղաքականության մասին համատեղ հայտարարությամբ: Մինչ այդ պատավում էր, որ ՄՎՀ-ից ստացվելիք 3 մլրդ դոլլարի օգնության համար ստորագրված այս համատեղ հայտարարությունը չի կայանա: Տվյալ դեպքում չի բացառվում, որ Միջազգային վալյուտային հիմնադրամը, որը Ռուսաստանին վերոհիշյալ 3 մլրդ խոստացել էր ոչ առանց Յոթնյակի ճնշման, առաջնորդվել է այն տրամաբանությամբ, որ Ռուսաստանի կառավարության եւ Կենտրոնական բանկի միջեւ առկա սուր հակասությունները կխոչընդոտեն փաստաթղթի ստորագրմանը: Ինչեւէ, Ռուսաստանում այս անգամ հաջողվեց խուսափել դեպքերի նման ընթացքից եւ ՄՎՀ-ը ստիպված կլինի տրամադրել խոստացած գումարի գոնե առաջին խմբաքանակը՝ 1.5 մլրդ դոլլար: Մյուս կեսը, որը պետք է հասկացվի սեպտեմբերին, ամենայն հավանականությամբ ՄՎՀ-ը կտրնի Ռուսաստանի կառավարությանը ներկայացվող այլ «պարտադիր պայմանները»:

Ապրիլի 15-ից մեկուկես ամիս է անցել ընդամենը, սակայն ճարդեն թե Ճապոնիայի, թե ԱՄՆ-ի կողմից խոստումը չկատարելու միտում է նկատվում: Դեռեւս ապրիլի 21-ին Ճապոնական Արանի քաղաքում կայացած կառավարող լիբերալ-դեմոկրատական կուսակցության սեմինարի ժամանակ կուսակցության գլխավոր քարտուղար Սեյրոկ Կածիյաման հայտարարել է, թե Ռուսաստանի նկատմամբ ինքը անվստահությունից եւ ատելությունից բացի այլ զգացմունք չի տածում: Իր հերթին, կուսակցության գործադիր խորհրդի ղեկավար Կոկո Սատոն հայտնեց, որ դա ոչ միայն ԼԴԿ ղեկավարի վերաբերմունքն է, այլեւ կառավարության վերին աստիճանում գտնվողների: Այս ենթատեքստում չի տեղավորվում այն փաստը, որ ապրիլի 15-ին Ճապոնիայի կառավարության ղեկավարները առանց նախադայմանների համաձայնվեցին Ռուսաստանին տրամադրել 1.82 մլրդ դոլլարի օգնություն: Փաստորեն, այս գումարը վարչապետ Միհաձոփան այն օրերին տրամադրեց ոչ այնքան Ռուսաստանին, որքան ԱՄՆ-ի ներկայացրած ծրագրի իրագործմանը: Ընդամենը մի քանի օր անց՝ ապրիլի 20-ին Ճապոնիայի վարչապետ Միհաձավայի Վաշինգտոն կատարած այցելությունից հետո պարզ դարձավ, որ ԱՄՆ-ը մտադիր չէ փոխել իր ոչ այնքան դրական վերաբերմունքը Ճապոնիայի, հատկապես նրա վարած տնտեսական քաղաքականության նկատմամբ, հանուն այդ 1.82 միլիարդի: Քլինթոնը Ճապոնիայի նկատմամբ ԱՄՆ վերաբերմունքի փոխման միակ պայմանը տեսնում է Ճապոնա-ամերիկյան առեւտրում Ճապոնիայի դրական սալդոյի բացակայության մեջ, որն անընդունելի է Ճապոնիայի համար:

Փաստորեն Ճապոնիան հայտնվեց խարված վիճակում եւ բնական է, որ օրերս այս երկիրը «ցնցվեց» Ռուսաստանից ստացված նոր տեղեկությունից: Ճապոնական «Չիթի Յուսին» գործակալությունը տարածել է մի հաղորդագրություն, որի համաձայն իբր գտնվել է մի «գաղտնի փաստաթուղթ», որից հետեւում է, թե Ռուսաստանը պատրաստվում է Ճապոնիայի նկատմամբ փոխել խոսակցության տոնը եւ տարածքային հարցը հայտարարել ամենեւին էլ գոյություն չունեցող: Խոսքը իբր գնում է «արտաքին քաղաքականության իդեալները» կոչվող սկզբունքային փաստաթղթի մասին, որը կազմվել է 1993 թ. ապրիլի 27-ին Ռուսաստանի անվտանգության խորհրդում: Ռուսաստանի ԱԳՆ հաջորդ օրն իսկ հերքեց նման փաստաթղթի գոյությունը: Սակայն, ըստ երեւույթին, Ճապոնիային դա այլեւս այնքան էլ չի հետաքրքրում: Կարեւորն այն է, որ Միհաձավան հենց այդ փաստաթուղթը հիշատակելով, թե՝ իր երկրի ժողովրդի, թե միջազգային հանրության առջեւ 1.82 մլրդ հատկացնելուց հրաժարվելու բարոյական իրավունք է ձեռք բերում:

ԳԵՎՈՐԳ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Նոր Գիրք

Լույս տեսավ «Հայ ճարտարապետության վավերագրերի» 21-րդ պրակը

Վենետիկի OEMME հրատարակչությունում լույս է ընծայվել «Հայ ճարտարապետության վավերագրերի» հերթական՝ 21-րդ պրակը, որը նվիրված է Նոր Ջուղայի ճարտարապետությանը: Մասենաշարի հեղինակներն են Միլանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության ֆակուլտետը եւ Հայաստանի Գիտությունների ակադեմիան: «Նոր Ջուղա» պրակի տեքստերը գրել են Արմեն Հախնազարյանը եւ Վահան Մեհրաբյանը:

Օգտագործված են Արմեն Հախնազարյանի, Արա Հարությունյանի, Արմեն Ստեփանյանի, Նժդեհ Յաղուբյանի լուսանկարները:

Ինչպես նշում են հեղինակները, Իրանում քաղաքական անկայունության ժամանակաշրջանից հետո 1587 թ. գահ բարձրացավ Շահ Աբբասը, որն զգալիորեն ընդարձակեց կայսրությունը: Այդ ժամանակ Հայաստանի Ջուղա քաղաքը բարգավաճ կենտրոն էր, միջազգային առեւտրի հանգույց, քանզի գտնվում էր «Մեսոպոտամիայի» վրա: 1603 թ. Ջուղան եւ իր շրջանը ենթարկվեցին Շահ Աբբասի ավերմանը, կողոպտվեցին ու հրդեհվեցին: Բնակչությունը տարագրվեց Իրան, հատկապես Սպահան: Դարերով առեւտրի եւ մեսոպոտամիայի կիսավար արտադրանքի մեջ մասնագիտացած բնակչության բոնազաղթը նոպատակ ուներ առեւտրական նոր ուղի ստեղծել բանկարժեք մետաղների համար, Պարսից ծոցը դարձնել տարանցման նոր կենտրոն, Օսմանյան կայսրությունից խլել Արեւելք-Արեւմուտք առեւտրի մեջ նրա առաջնակարգ դերը, նրան զրկել առեւտրական վիթխարի հարկերի գանձման հնարավորությունից:

Առավելապես վաճառականներից բաղկացած Սպահանի հայ համայնքն արդեն 1592 թ. ստացել էր մի շարք արտոնություններ: 1610 թ. համայնքի հետ կապերն ամրապնդելու նպատակով Շահ Աբբասն արտոնեց Սպահանում եկեղեցի կառուցել: 1615 թ. նոր հրովարտակով նա հայ գաղութին գահապատկան ընդարձակ հողատարածություն նվիրեց Ջանֆեդա գետից եւ Սպահանից հարավ, որտեղ էլ կառուցվեց Նոր Ջուղայի հայկական քաղաքամասը: 1606 թ. իրանահայերին տրվեց «գահի առաձնաշնորհյալ անձանց» կարգավիճակ: Նրանք ազատվում էին շատ հարկերից եւ տուրքերից, պարսիկների հետ իրավահավասար էին, ունեին կրոնավարչական ու դատական ինքնավարություն: 1617 թ. Շահ Աբբասը «Արեւելահնդկական ընկերությունից» վերցրեց մետաքսի առեւտրի մենաշնորհը եւ հանձնեց Նոր Ջուղայի հայերին: Դա Անգլիայում առաջացրեց հակահայ տրամադրություններ ու ելույթներ, որոնք դրսեւորվում էին ընդհուպ մինչեւ Առաջին աշխարհամարտի ավարտը: Նոր Ջուղան շուտով դարձավ իրանահայ համայնքի մշակութային եւ կրոնական կենտրոնը: Այնտեղ հիմնվեց թեմական առաջնորդարան, որը 18-րդ դարից իր կրոնավարչական հովանու տակ առավ Իրանի ողջ երկրամասերի 64 հայկական գյուղերը. Բասրայի Բաղդադ քաղաքների եւ Հնդկաստանի հայ գաղթօջախները:

17-րդ դարի կեսերին արդեն Նոր Ջուղայում արտադրվում եւ միջազգային շուկաներում շահեկանորեն վաճառվում էին բանկարժեք գոհարեղեն ու զարդեղեն: Քաղաքում կառուցված էր 24 եկեղեցի ու վանք, որոնցից 13-ը պահպանվել է մինչեւ օրս: Նոր միջավայրում, սակայն, հայ ճարտարապետներն ավանդական քարի փոխարեն սկսեցին օգտագործել աղյուս, իսկ եկեղեցիները «բաժնվեցին» քաղաքի կառուցապատական տարածքի մեջ: Վանական համալիրներն ունեին մեկ մուտք, իսկ զանգակատներ կառուցվեցին ավելի ուշ: Գմբեթներն անտեսանելի են քաղաքի նեղ փողոցներից: Իրանական ազդեցություն է բակ-հրապարակի առկայությունը, սակայն կառույցների բնորոշ հատակագիծը մնում է հայկականը՝ կենտրոնական մասում գմբեթակիր չորս ազատ սյուներով սրահը: Երբեմն սյուներ չկան, եւ գմբեթը հենվում է ուղղակի գլխավոր պատերի վրա: Ներքին եւ արտաքին հարդարման մեջ առկա են իրանյան ճարտարապետության տարրեր:

1636 թ. Խաչատուր Կեսարացու ջանքերով Ս. Ամենափրկիչ վանքում հիմնվում է Միջին Արեւելքում առաջին տպարանը, որի տարեվերումները հետագայում բանիցս նորացվում են: Տպարանը գործում է մինչեւ օրս եւ լույս է ընծայել 400-ից ավելի գրքեր եւ այլ տպագիր նյութեր:

17-րդ դարի սկզբներից մինչեւ 1901 թ. Նոր Ջուղայում բացվել են աշխարհիկ եւ հոգեւոր բազմաթիվ դպրոցներ, որոնցից մի քանիսը գործում են մինչեւ օրս: Կա մեկ մանկապարտեզ: 1907 թ. վանական Բագրատ Վարդապետյանի ջանքերով ու ղեկասով հիմնվեց Նոր Ջուղայի առաջին որբանոցը, որն այսօր էլ գործում է: 1970 թ. քաղաքում բացվեց նոր ծերանոց, իսկ 1932 թ. բացվել է «Հովսեփ Պողոսյանյան» արդիական հիվանդանոցը:

«Նոր Ջուղա» պրակն առատորեն պատկերազարդված է: Այն տպագրված է OEMME հրատարակչությանը բնորոշ բարձր որակով:

Ս. Գեւորգ եկեղեցի (1611 թ.)

ՊԵՏՐՈՍ ՔԵՇԻՇՅԱՆ

Վերլուծություն

Ո՞վ պետք է զբաղվի դժվար դասաիարակվող երեխաներով

Խոսքս վերջին ժամանակներս ներքին գործերի քաղաքային եւ շրջանային բաժինների անչափահասների գործերով զբաղվելու մասին է: Ես, որ նախկինում ղեկավարել եմ անչափահասների մի տեսչություն եւ հետագայում մանկավարժական երկարատեւ աշխատանքի ընթացքում առնչվել այդ օղակի հետ, զարմանք եւ տարակուսանք եմ արտահայտում: Նույնիսկ այս մի քանի ամիսների ընթացքում, երբ դադարեցվել են այդ մարմինների աշխատանքները, ավելի շատ է զգացվում նրանց գործունեությունը նոր հիմքերի վրա վերականգնելու անհրաժեշտությունը:

Սոցիալական, քաղաքական եւ տնտեսական ծանր վիճակում հայտնված մեր հանրապետությունում, երբ օրըստօրե աճում են անչափահասների կողմից կատարվող հանցագործությունները, օրակարգի հարց է դառնում գտնել այդ երեւույթի դեմ պայքարելու նոր ձեւեր ու մեթոդներ, արդյունավետ միջոցներ, այդ գործում ներգրավել նոր ուժեր: Այժմ, երբ լուծարվել են նաեւ տեղամասային տեսչների հատուկները եւ նրանց պարտականությունները դրվել բեռական հետախուզական բաժնի տեսչի վրա, հարցն ավելի է բարդացել: Ներքին գործերի նախարարության բաժինն արդյոք շատ չի՞ ծանրաբեռնվում:

Անչափահասների տեսչությունները լուծարելու փոխարեն այդ գործում պետք է ընդգրկել հասարակության լայն խավերին, առաջին հերթին մանկավարժական գիտությամբ զբաղվող դասախոս մանկավարժների եւ մանկավարժական բուհերի ուսանողության բանակին: Դա կարելի էր անել պետականորեն, այն է՝ նրանց պարտադիր մանկավարժական պրակտիկայի գործողել անչափահասների տեսչություններ, ամեն մի ուսանողի ամրացնելով տեսչությունում հսկողական հաշվառման մեջ վերցված մեկ անչափահասի: Մի կողմից այդ ուսանողը ձեռք կբերեր այսպես կոչված դժվար դասաիարակվող անչափահասների հետ վարվելու փորձ եւ հմտություն, որը հսկայական նշանակություն կունենար նրա հետագա մանկավարժական աշխատանքում, մյուս կողմից հսկողական հաշվառման մեջ գտնվող անչափահասը կգտնվեր իրոք հսկողության տակ: Այն բանից հետո, երբ հայտնի կդառնար, թե տվյալ ուսանողը հաշվառման մեջ գտնվող իրեն ամրացված անչափահասի վերադաստիարակման ուղղությամբ ինչ ծավալի եւ բովանդակության աշխատանք է կատարել, ըստ դրան էլ կնշանակվեր համապատասխան գնահատական: Իրավախախտման հակում ունեցող եւ կամ արդեն իրավախախտում թույլ տված հաշվառման մեջ գտնվող անչափահասների հետ տարվող աշխատանքում անմիջապես կբացահայտվի այն ուսանողի հսկումը եւ ընդունակությունը, որը կարող է եւ սիրում է այդ աշխատանքը: Բուհն ավարտելուց հետո նրանց կարելի կլիներ վերցնել մշտական աշխատանքի: Դրանով էլ հնարավորություն կստեղծվեր անչափահասների տեսչությունները համալրել, իրենց գործին նվիրված, արդեն որոշակի փորձ, անհրաժեշտ գիտելիքներ եւ համապատասխան կրթություն ունեցող գործիչներով: Արտադրական՝ պրակտիկան ղեկավարող դասախոս մանկավարժների եւ ուսանողության հոգ զբաղվածների ներգրավումն այդ աշխատանքում անկարելի է, որ չտար իր դրական արդյունքը: Այն անվիճելիորեն կնվազեցներ անչափահասների շրջանում կատարվող հանցագործությունների թիվը, ավելի շատ կհայտնաբերվեին չտվորող-չաշխատող, անհոգատակ բարեսրտող, դպրոցներից դուրս մնացած անբարենպաստ ընտանիքների երեխաներ: Մանկավարժական բուհի մոտեցումը դասաիարակչական այդ կարեւոր օղակին աոիք կհանդիսանար, որ գիտնականմանկավարժներն ավելի մոտիկից ուսումնասիրեին անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների բնույթը, ծնող պատճառները: Գիտական խոր վերլուծություններից հետո կտրվեին անհրաժեշտ դեղատոմսեր: Դա իրոք կլիներ պրոֆիլակտիկ, կանխիչ հստակ աշխատանք, որը ստեղծված նոր պայմաններում նոր խոսք կասեր մանկավարժական գիտության մեջ:

Միանգամայն հանգում եմ մի եզրակացության, որ անչափահասների տեսչությունների լուծարումը հարցի լուծման ճիշտ ուղին չէր:

Դ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Թիվ 14 ուսումնարանի փոխտնօրեն

digitised by A.R.A.R.@

Գյումրի

Լյովա Ադամյան. «ՄԵՋ ՀԱՋՈՂՎԵԼ Է ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԴԵՄՔՈՎ ՇՐՋԵԼ ԴԵՊԻ ԱՂԵՏԻ ԳՈՏԻ»

Գյումրին 88-ի դեկտեմբերյան երկրաշարժից ավերված ամենամեծ բնակավայրն է: Շիրակի երբեմնի ծաղկուն ոստյանը, հանրապետության երկրորդ քաղաքը դաժան աղետից գրեթե հինգ տարի հետո էլ մնում է ավեր ու վիրավոր՝ ոչ մի կերպ չկարողանալով ազատել մեջքը: Երկրաշարժից հետո ծավալված շինարարության թափը տարեցտարի այնքան է թուլացել, որ անցյալ տարի քաղաքում շահագործման հանձնվեց ընդամենը... 35 բնակարան: Մինչեւ այժմ այստեղ բնակարան է ստացել աղետից անօթեւան մնացած 4,5 հազար ընտանիք, իսկ եւս 19 հազար գյումրեցի աղետյալ ընտանիքներ անտուն են: Էլ չենք խոսում վերականգնման մյուս աշխատանքների մասին...

Այսօր փորձեր են արվում իրերի նման վիճակը փոփոխելու, քաղաքի վերականգնման գործը տեղից շարժելու: Այս խնդրի շուրջ է մեր հարցազրույցը Գյումրիի քաղխորհրդի նախագահ, ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Լյովա Ադամյանի հետ:

– Գաղտնիք չէ, որ գյումրեցի շատ ընտանիքներ արդեն կորցրել են երբեւէ բնակարան ունենալու ու մարդավայել ապրելու հույսը: Եւ դա կարելի է հասկանալի: Շինարարության նման տեմպերի պահպանման դեպքում ամենահամեստ հաշվարկներով իսկ այստեղ եւս 20 տարի կպահանջվի անօթեւան մնացած բոլոր ընտանիքներին բնակարանով ապահովելու համար: Պարոն Ադամյան, Դուք որպես քաղաքի բնակիչ եւ որպես քաղաքապետ հավատո՞ւմ եք տեսանելի ապագայում Գյումրիի վերածննդին:

– Այո, հավատում եմ: Ես հավատում եմ այն մեխանիզմներին, որոնց գործադրմամբ Գյումրին, աղետի գոտին կարող է վերականգնվել ոչ տեսական ժամանակամիջոցում: Միայն թե դրա համար մեծ ցանկություն ու մեծ աշխատանք է պետք բոլոր մակարդակներում:

– Անցյալ տարվա նոյեմբերի վերջին ընտրվելով քաղխորհրդի նախագահ, Դուք ասում եք հայտարարեցիք. «Ես իշխանության եկա քաղաքը վերականգնելու համար»: Ճիշտն ասած, ներկա պայմաններում դա բավականին համարձակ խոսքում էր: Դուք դրա համար ծրագիր ունե՞ք: Եւ երկրորդ, հիմա՝ վեց ամիս աշխատելուց հետո, նույն վստահությունն ունե՞ք...

– Ես ունեի ծրագիր, որ մշակել էի վերջին երկու տարվա ընթացքում, երբ գործազուրկ էի: Դա քաղաքի վերականգնման իմ հիմնադրույթներն էին, որ իշխանությունը ստանձնելուց հետո նոր գործկոմում կարողացանք 2,5 ամսում լրամշակել, մանրամասնել ու որպես ամբողջական ծրագիր ներկայացնել հանրապետության կառավարությանը: Այն հավանության է արժանացել եւ այժմ օգտագործվում է ամբողջ աղետի գոտու ծրագրի կազմման աշխատանքում: Արդեն լուծված են նաեւ Գյումրիի 1993 թ. շինարարության ծրագրի ֆինանսավորման հարցերը: Ահա թե ինչու ես հիմա նույնիսկ ավելի մեծ վստահություն ունեմ հաջողության հանդեպ, քան վեց ամիս առաջ:

Ամենակարեւորը, մեզ հաջողվել է հանրապետության կառավարությանը դեմքով շրջել դեպի աղետի գոտին: Որպես արդյունք կարող եմ նշել նաեւ մայիսի 1-ին վարչապետ Հրանտ Բագրատյանի ղեկավարությամբ կառավարության կազմի այցելությունն ու արագնա նիստը Գյումրիում, առյա դրան հաջորդած որոշումները:

– Այսպիսով, վերջապես կա Գյումրիի վերականգնման սեփական, եւ պետք է ենթադրել՝ իրատեսական ծրագիր: Խնդրում եմ հնարավորին չափ համառոտակի ներկայացրեք այն:

– Դա քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրն է մինչեւ 2000 թվականը, որն ըստ էության վերականգնման-վերակառուցման ծրագիր է: Այն ընդգրկում է գրաստորեն բոլոր ոլորտները, ուստի ամբողջովին ներկայացնելը շատ երկար կլինի: Ծրագիրն իրատես է եւ հենվում է գլխավորապես հանրապետության ներքին հնարավորությունների վրա, չբացառելով նաեւ արտաքին «ներարկումները» վարկերի ձեւով: Խոսքս կոնկրետացնելու համար ուզում եմ մի փոքր կանգ առնել այս տարվա ծրագրի հիմնական կողմերի վրա, որտեղ ամեն ինչ արդեն մանրամասնորեն ճշգրտված ու սահմանված է:

Որոշվել է ընթացիկ տարվա շինարարական-վերականգնողական աշխատանքների համար քաղաքին տրամադրել շուրջ 10 միլիարդ ռուբլի: Այդ գումարը մասհանումների ձեւով գոյացել է ֆինանսավորման հինգ աղբյուրներից աղետի գոտուն տրամադրված միջոցներից: Դրանք են պետական բյուջեն, «Հայաստան» հիմնադրամը, վարկային էմիսիան, Ռուսաստանի եւ Համաշխարհային բանկի վարկերը: Ֆինանսավորումը եւ ներդրված միջոցները մեծ մասամբ նպատակային են եւ տրվել են կոնկրետ հասցեներով, առաջին հերթին բնակարանաշինությանը: Այսօր քաղաքի նոր թաղամասերում կան 650 կիսակառույց բնակելի, դպրոցական, նախադպրոցական եւ այլ շենքեր: «Հայաստան» հիմնադրամը հատկացումներ է կատարել, որպեսզի ավարտին հասցվեն 57 բնակելի, 2 դպրոցական եւ 1 նախադպրոցական շենքերի շինարարությունը: Հիմնադրամի միջոցներից նաեւ 50 միլիոն ռուբլի հատկացվել է տեխնիկ-կարի արտադրական միավորման, 20 միլիոն ռուբլի գուլպանասկեղենի արտադրական միավորման վերականգնմանը նպաստելու համար: Համաշխարհային բանկի տրամադրած միջոցներով «Անի» եւ «Մուշ» թաղամասերում մինչեւ տարեվերջ ավարտին կհասցվի 31 կիսավարտ բնակելիների շինարարությունը, կֆինանսավորվի երկու միջին ձեռնարկությունների վերականգնումն ու արեգակնային մարտկոցներով գործող բաղնիքային համալիրի կառուցումը: Դաշնակցային Ռուսաստանի վարկի հաշվին հիմնականում կամբողջանա «Անի» բնակելի զանգվածը:

Հատկապես մեծ հույսեր ենք կապում անհատական բնակարանային շինարարության կազմակերպված ծավալման հետ: Այս մասին հանրապետության կառավարության առանձին որոշումը (մայիսի 8) արդեն տպագրվել է մամուլում: Միայն այս տարի պետք է կառուցվի 800 տուն: Այդ նպատակով կառավարությունը տրամադրել է 2 միլիարդ ռուբլու վարկ: Անհատական բնակարան կառուցող յուրաքանչյուր ընտանիքի 25 տարով կհատկացվի 2,5 միլիոն ռուբլու վարկ: Ընդ որում, շենքի հիմնային մասի (զրոյական ցիկլ) եւ ինժեներական հաղորդակցությունների շինարարությունը կկատարվի պետության հաշվին: Ընտրության համար բնակիչներին կտրամադրվեն տեղական շինանյութերի հնարավորություններից բխող երեք տիպի խարայիններ, հավաքովի-պանելային եւ հայ-ամերիկյան տնաշինական կոմբինատի բողարկած բլոկներով կառուցվող շենքերի նախագծերի մի քանի տարբերակ: Անհատական բնակելի տների շինարարությունը կիրականացվի կաղալային հիմունքներով, շինկազմակերպությունների միջոցով, բնակչի հետ կնքված պայմանագրի հիման վրա: Իր տան վրա աշխատել ցանկացող բնակիչն աշխատանքի կձեւակերպվի շինարարությունում եւ իր կատարածի դիմաց կստանա աշխատավարձ: «Շիրակին» միավորումը սկսել է 23 տների հիմնային աշխատանքները:

– Տարին կիսվում է: Ո՞ւր չէ շինարարությունը սկսելու եւ այս տարվա ծրագիրն իրացնելու համար:

– Իրոք, բավականին ուր է: Բայց մեր նոր գործկոմի տրամադրության տակ քիչ ժամանակ է եղել, եւ մենք այն օգտագործել ենք: Գուցե հնարավոր կլինի շինարարական աշխատանքները կազմակերպել երկու, երեք հերթով, որոշ չափով նաեւ ձմռանը: Եթե ինչ-որ բան չհասցնենք էլ՝ գումարները չեն կորչի, կփոխանցվեն մյուս տարվան: Իսկ եկող տարի արդեն այդպես չի լինի:

– Մոտավորապես ե՞րբ բնակարան կունենա վերջին անօթեւան գյումրեցին:

– Մեր հաշվարկները հետեւյալն են: Կիսակառույց շենքերում ունենք 6300 բնակարան, որոնց կառուցումը ծրագրել ենք ավարտել երեք տարում: Եթե այս տարի կառուցենք 800 առանձնատուն, իսկ առաջիկա տարիներին՝ 1500-2000-ական, ապա 5-6 տարում շուրջ 10 հազար բնակարան կունենանք եւ այդ դեպքում հարցը կլուծվի: Ուզիներ ենք որոնում նաեւ ամրացման եղանակներ գտնելու համար:

– Իսկ ի՞նչ երաշխիքներ կան դրա համար:

– Մեր ծրագրի ժամանակին իրագործման հաջողությունը կախված կլինի նախ մեր աշխատանքից, համախմբումից, ապա անդայման հանրապետության կառավարության անմիջական օգնությունից, եւ վերջինը, շրջափակման ու էներգետիկ ճգնաժամի ասիճանից:

Ֆինանսավորման հարցում կառավարության կողմից խոչընդոտներ չեն լինի, ինչպես այս տարի չեղան: Շինանյութերի հարցը կլուծվի հիմնականում տեղական հնարավորությունների՝ Հայաստանում արտադրվող շինանյութերի հաշվին: Կմնա մեստաղի եւ փայտանյութի խնդիրը, որոնք հարկ կլինի բերել ինքնաթիռներով եւ ձեռներեց մարդկանց ուժերով: Աշխատուժի պակաս չկա: Ունենք նաեւ հետերկրաշարժյան շրջանում ստեղծված շինարարական հզոր բազա:

– Գյումրին այսօր նաեւ գործազուրկների քաղաք է դարձել: Ի՞նչ է արվում նրա արդյունաբերական ներուժը վերականգնելու եւ գործի գցելու ուղղությամբ:

– Այս հարցի լուծումը բաղնված է նախարարություններին, որոնք առայժմ ոչ բատարգիր մոտեցում են հանդես բերում: Մինչդեռ առանց արդյունաբերության աշխատանքի հնարավոր չէ լիարժեք լուծել քաղաքի հիմնահարցերը: Մենք մեր մոտեցումներն այս հարցում հստակ ներկայացրել ենք: Նախատեսում ենք, մասնավորապես, արտադրանքի տեսականու կողմնորոշում առաջին հերթին դեպի քաղաքի ու հանրապետության պահանջարկը, որից հետո միայն արտահանական արտադրանքի բողարկում: Առաջարկում ենք ձեռնարկություններին վերականգնման համար տոկոսներով վարկ տրամադրել: Մի քարք ձեռնարկությունների ներքին հնարավորությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանք կարող են մի երեք տարում իրենց պարտքը փակել: Հուսով եմ, կկարողանանք նախարարությունների հետ համաձայնության գալ, եւ գործը տեղից կշարժվի: Այլեւս հապաղել չի կարելի:

– Ճիշտն ասած, առանց աղետի գոտու նկատմամբ հատակ մշակված պետական քաղաքականության դժվար է պատկերացնել նրա իսկական վերածնունդը: Դուք որպես պատգամավոր չե՞ք կարծում, որ հանրապետության Գերագույն խորհուրդը, մեղմ ասած, պարտք է աղետի գոտուն:

– Ձեր ասածին համամիտ եմ: Այստեղ մեղքի որոշակի բաժին ունենք Գյումրիից ընտրված պատգամավորներս: Պետք է ասեմ, որ այսօր Գերագույն խորհրդում աղետի գոտու հետ առնչվող հարցերի դրոշակիր է դարձել համանուն հանձնաժողովի նախագահ Թաչիկ Ստամբոլցյանը, որի հայտնի հրաժարականը պայմանավորված է աղետի գոտու նկատմամբ խորհրդարանի ունեցած հայեցողական դիրքորոշմամբ: Իր հրաժարականով նա հանրապետության ղեկավարությանը սիրեց փոխել վերաբերմունքն աղետի գոտու նկատմամբ: Եւ ես հույս ունեմ, որ մոտ ապագայում նաեւ նրա ջանքերով կկարողանանք կառավարությունում հաստատել տալ աղետյալ քաղաքների ու շրջանների վերականգնողական աշխատանքների կառավարման, ղեկավարման հստակ համակարգ: Իր կարծիքով, ճիշտ կլինի աղետի գոտու գծով պետնախարար նշանակելը, որը կհամակարգի ամբողջ աշխատանքը:

Իհարկե, վերականգնման մեխանիզմը կախված կլինի ընդունվելիք ծրագրի բնույթից: Ինչպես ասացի, կառավարությունում (ավելի ստույգ՝ էկոնոմիկայի նախարարությունում) մշակվում է աղետի գոտու վերականգնման ծրագիր: Այն պատրաստ կլինի հավանաբար սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, որից հետո կներկայացվի Գերագույն խորհրդի քննարկմանը: Գյումրեցի պատգամավորներս ամեն ինչ կանենք, որ հարցը մտցվի օրակարգ եւ ցանկալի լուծում ստանա:

Հարցազրույցը վարեց
ԳԵՂԱՍ ՄԿՐՏՉՅԱՆԸ
Մեր. սեփ. թղթակից, Գյումրի

Տիրանպատ

Մեծարժեք ներդրում

Ֆրանսիական MCA Décine հրատարակչությունը Վալանսում այս տարի լույս է ընծայել Վալանսի համալսարանի պրոֆեսոր Անրի Սիրանյանի «Հայ նշանավոր հեղինակների բառարանը»: Ինչպես նշել են գրքի առաջաբանի հեղինակները՝ հայաստանցի գրականագետներ Հենրիկ Բախչինյանը եւ Գուրգեն Հովնանը, «նա՝ փաստորեն առաջինը լինելով, ֆրանսիացի ընթերցողներին է ներկայացրել մի կենսագրական բառարան, որտեղ ընդգրկել է 5-20-րդ դարերի ընթացքում գրական ասպարեզ իջած մոտ 400 նշանավոր հեղինակների համառոտ կենսագրականները:

Հեղինակը կենսագրական բառարանի սկզբում համառոտակի ներկայացրել է հայ գրականության զարգացման հիմնական փուլերը: Այսպիսով, ֆրանսիացի ընթերցողը կարող է լայն պատկերացում կազմել հայ գրականության ամբողջ պատմության եւ նրա ակնառու ներկայացուցիչների մասին: Այս աշխատությունը կարող է նաեւ հիմք հանդիսանալ տեսական, գրականագիտական տարբեր կարգի ուսումնասիրությունների համար: Այնպես որ, Ա. Սիրանյանի այս գիրքը, որի հրատարակությունը արտանց ողջունում ենք, արժեքավոր ներդրում է հայ գրականությունը ֆրանսիացի ժողովրդին ներկայացնելու կարեւոր գործում: Ասենք նաեւ, որ ֆրանսագիր հայ բանաստեղծների ուսումնասիրությունները հայ գրականությունը եվրոպայում ներկայացնելուց բացի ունեն նաեւ մեկ այլ նպատակ՝ պատասխանել հայ ժողովրդի դատը: ■

Երեւան

Հայ գործարարների ֆորում

Մայիսի 29-ին Երեւանում բացվեց հայ գործարարների ֆորումի հերթական 3-րդ խորհրդաժողովը, որին ներկա էին 90 պատգամավորներ արտասահմանյան տարբեր երկրներից, ինչպես նաեւ Հայաստանից: Բացման խոսքով հանդես եկավ հայ գործարարների ֆորումի նախագահ Վահե Ճաղմաստարյանը (Ֆրանսիա): Այնուհետեւ ելույթ ունեցավ հանրապետության փոխնախագահ Գագիկ Հարությունյանը, որը ներկայացրեց հանրապետության տնտեսական զարգացման հիմնախնդիրները եւ խոսեց Հայաստանի եւ սփյուռքի տնտեսական փոխհարաբերությունների զարգացման մասին՝ կարեւորելով ֆորումի առաքելությունն այդ գործում: Հանրապետության էկոնոմիկայի նախարար Արմեն Եղիազարյանը ներկաներին ծանոթացրեց հրատապ նշանակություն ունեցող մի քանի ծրագրերի:

Հաշվետվություններով հանդես եկան ֆորումի փոխնախագահ Հերմինե Նաղդալյանը եւ գանձապահ Սուրեն Սարգսյանը: Էկոնոմիկայի փոխնախարար Արմեն Դարբինյանը ներկայացրեց Հայաստանին օգնելու միջազգային մի շարք կազմակերպությունների տնտեսական ծրագրերը: Այնուհետեւ տեղի ունեցավ մտքերի փոխանակություն տնտեսական առաջնային ծրագրերի եւ ֆորումի հետագա գործունեության մասին:

Մայիսի 31-ին ֆորումը շարունակեց աշխատանքը: Ելույթ ունեցողները՝ գյուղատնտեսության փոխնախարար Իշխան Մարտիրոսյանը, Հրազդանմաշ արտադրական միավորման գլխավոր տնօրեն Թելման Տեր-Պետրոսյանը խոսեցին առաջինը Հայաստանի գյուղատնտեսության ճգնաժամային վիճակի, երկրորդը արտաքին տնտեսական կապերի առաջնային դերի մասին:

Ելույթների մեջ նշվեցին բազմաթիվ հարցեր. շրջափակման դժվարություններ, մտավորականների արտահոսք, հայ-ռուսական տնտեսական կապերի ամրապնդում, Ռուսաստան-Հայաստան-Սփյուռք եռանկյունու անհրաժեշտություն: Եղան առաջարկներ:

Հայաստանի Գերագույն խորհրդի անդամ Գրիգոր Ավագյանը մտավախություն հայտնեց, որ ֆորումը ցանկալի արդյունք չի տա եւ առաջարկեց խոսքից անցնել գործի: Նույնքիսի առաջարկությամբ հանդես եկավ Տիգրան Ժամկոչյանը ԱՄՆ-ից:

Երեկ, նիստի վերջում ելույթ ունեցավ ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը: ■

Մոսքվա

«Բալկանների կայունությունը» հանդիպման թեմա

«Ժամանակն է համաշխարհային հանրությանը ցույց տալ, որ բալկանյան երկրների երիտասարդները շրջանի համար ծանր պահին կարող են քաղաքակիրթ քննարկման նպատակով նույն սեղանի շուրջը նստել», ՌԻԱ-ի թղթակցին ասաց Բուլղարիայի երիտասարդության սոցիալիստական միության նախագահ Լյուբոմիր Նիկոլովը, որը մայիսի 31-ին Սոֆիայում բացեց Բալկանների երիտասարդության հանդիպումը «Բալկանների կայունությունը» թեմայով: Դրան մասնակցում են Ալբանիայի, Հունաստանի, Կիպրոսի, Մակեդոնիայի, Սերբիայի 13 երիտասարդական կազմակերպություններ, ինչպես նաեւ բուլղարական 5 կազմակերպություն:

Բազմազան է մասնակիցների քաղաքական կազմը. Ալբանիայի եվրոսոցիալիստներ, Հունաստանի կոմունիստներ, Մակեդոնիայի եւ Կիպրոսի ժողովրդավարներ, Բուլղարիայի սոցիալ-դեմոկրատներ: Նախատեսված է կիրակի օրն ընդունել բալկանյան երիտասարդության համերաշխության հռչակագիր: Դրան կկարողանան միանալ շրջանի նաեւ մյուս երիտասարդական շարժումները:

Սնարք

digitised by A.R.A.R.@

Գերմանիա

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՆԵՇ ԸՆԴԴԵՄ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ

Գերմանիայի կառավարությունն ընդունեց կարեւորագույն որոշում, որը խիստ սահմանափակում է փախստականների մուտքը երկիր եւ նրանց ապաստան ստանալու իրավունքը: Տարիներ շարունակ սահմանադրության քննարկվող, աղարացվող ու դասաղարտվող 16-րդ հոդվածը վերջապես ձեւափոխվեց ի վնաս հարյուր հազարավոր օտարերկրացիների, որոնց համար Գերմանիան փրկություն էր բռնություններից ու հալածանքներից, ինչպես նաեւ բարեկեցիկ կյանքի երազանք:

Բեռլինի Շյոնեֆելդ օդանավակայանում-վայրէջք կատարած ուկրաինական ինքնաթիռից դուրս նետվեցին 49 վտարանդիներ եւ շարժասանդուղքին նստելուն պես քաղաքական ապաստան ստանալու խնդրանք ներկայացրին: 43 հնդիկներ ու 6 պաղեստինցիներ թռիչքի համար վճարել էին 5000-ական ամերիկյան դոլար (մոտ 8000 գերմանական մարկ): Նրանց ուղեւորությունն, անկասկած, նախապատրաստվել էր բավական ժամանակ եւ պրոֆեսիոնալ մակարդակով: Բոլորն էլ ունեին Գերմանիայի կեղծ հրավերներ եւ խոստովանեցին, որ թռիչքից մի քանի ամիս առաջ նրանց տեղավորել էին ԱՊՀ երկրների քաղաքներում: Օդաչուի հետ գերմանական սահմանապահ ծառայողների բացատրվելու ջանքերն աղարտյուն անցան, եւ ուկրաինական ավիացիայի բարեգործական ինքնաթիռը ետ թռավ:

Այդպիսի մի ինքնաթիռ էլ վերջերս վայրէջք կատարեց Մայնի Ֆրանկֆուրտում, բերելով հնդիկ եւ պաղեստինցի փախստականներ: Նրանց տեղավորելն այնքան էլ հետաքրքիր չէ: 212000 բնակչություն ունեցող վեստֆալյան Հագեն քաղաքում մնում են 2000 վտարանդիներ 40 աղաստարաններում: Սպասվում են եւս 1000 օտարերկրացիներ, որոնք սխալված պետք է տեղավորվեն 15-20 մարզադահլիճներում: Հագենի քաղաքապետի խոսքերը վրդովմունք, դժգոհություն, զղջված զայրույթ են արտահայտում. «Մեզ համար անտանելի են դարձել իշխանությունների անգործությունն ու անվերջ դատարկաբանությունը: Մենք պետք է ինքներս պաշտպանենք մեզ եւ պետք է արգելենք վտարանդիների մուտքը մեր քաղաք, անկախ նրանից, արդյոք մեր այս քայլն իրավա՞ն է, թե ոչ»:

Վերամիավորումից հետո տնտեսական մեծ դժվարությունների մեջ խրված Գերմանիայի համար վտարանդիների խնդիրը հսկայական խոչընդոտ է երկրի կայուն զարգացման ճանապարհին: Փախստականների նոր հոսքը մոտ ապագայում սպառնում է խոշոր չափեր ընդունել, իսկ ստեղծված օրհասական դրության «մեղավորը» ԳԴՀ սահմանադրության 16-րդ հոդվածն է, որը քաղաքական հալածյալներին Գերմանիայում ապաստան ստանալու իրավունք է տալիս: Այդ իրավունքից տասնյակ տարիներ օգտվել են բազմաթիվ փախստականներ, իսկ չեն նաեւ այն շարաշահողները: Վերջին տարիներին զգալիորեն աճել է «վտարանդու» քողի տակ Գերմանիայում հաստատվել ցանկացողների թիվը: 16-րդ հոդվածի վերանայման անհրաժեշտությունը դարձել է հրատապ խնդիր: Այդ հոդվածի փոփոխման հարցը բազմիցս դրվել էր Բունդեսթագի քննարկմանը եւ ենթարկվել սուր վիճաբանությունների: Նախորդ տարվա դեկտեմբերին երկարատեւ քննարկումներից հետո կոալիցիոն կառավարությանը (քրիստոնեա-դեմոկրատական միություն, քրիստոնյա-սոցիալական միություն, դեմոկրատական կուսակցություն) հաջողվեց ներկայացնել փոխզիջումային մի տարբերակ, որը պետք է հաստատվեր այս մայիսին: Ըստ դրա, վերոհիշյալ 16-րդ հոդվածը լրացվում է 16-րդ «ա» պարբերությամբ, որի համաձայն ապաստան պահանջելու իրավունք չունեն այն երկրների քաղաքացիները, որտեղ երաշխավորված է մարդու իրավունքների վերաբերյալ Ժնեւի կոնվենցիայի կիրառումը: Իսկ ապաստան ստանալու խնդրանքով դիմող փախստականները ետ են ուղարկվում այն «ապահով երրորդ երկրներ», որոնց տարածքով նրանք մուտք են գործել Գերմանիա: Սկզբում այդ երկրների շարքին էին դասվում Լեհաստանը, Չեխիայի Հանրապետությունը, Ավստրիան եւ Շվեյցարիան: Հատուկ կարգավիճակ է նախատեսվում ազգությամբ գերմանացի ներգաղթողների եւ պատերազմական շրջանների փախստականների համար: Ընդդիմադիր սոցիալ-դեմոկրատները համաձայն չէին փոխզիջումային այն տարբերակին: Նրանց կարծիքով, դա ոչ թե վտարանդիների խնդիրների լուծում է, այլ այդ խնդիրների բարդելը հարեւան պետությունների վրա:

Կոալիցիայի եւ ընդդիմության միջեւ այդ հարցի շուրջ սասկացող պայքարը, որ միայն շիկացրեց սրընթացը երկու ճակատներում, էական փոփոխություններ չմտցրեց: Կառավարության փորձագետները համաձայնության եկան ներքին գործերի նախարար Ռուդոլֆ Զայբերսի (ՔԴՄ) հետ «ապահով երրորդ երկրների» շրջանակներն ընդլայնելու վերաբերյալ: Այսինքն իշխանությունները, առանց քննելու փախստականների ապաստան ստանալու խնդրանքը, նրանց, բացի վերոհիշյալ երկրներից, ետ են ուղարկում նաեւ Ֆինլանդիա, Շվեդիա, Նորվեգիա, Սլովակիայի Հանրապետություն եւ Հունգարիա: Ճիշտ է, իշխանությունների նման նախաձեռնությունը բխում է սեփական ժողովրդի շահերից եւ ուղղված է նրա բարոությանը, այնուամենայնիվ այն համընդհանուր հավանության չարժանացավ: Դեռ ավելին, ապաստան ստանալու իրավունքի վերաբերյալ փոխզիջումային տարբերակը քննադատում են այն քաղաքացիները, որոնք առաջնորդվում են ոչ միայն զուտ ազգային շահերով: Նրանց համար 16-րդ հոդվածի փոփոխությունը Գերմանիայի հիմնական օրենքի աղավաղումն է, մարդու ապաստան ստանալու իրավունքի բովանդակության աղավաղումը, իսկ դա նշանակում է, որ այդ իրավունքը որոշ այդպիսին դադարում է գոյություն ունենալ:

Համենայն դեպս, հասարակության տարբեր խավերի այդ հայացքներն ու տրամադրություններն արտահայտող եւ ճգնաժամի մեջ գտնվող սոցիալ-դեմոկրատների դիմադրությունը որոշակիացավ, երբ Բունդեսթագում քվեարկման դրվեց 16-րդ հոդվածի վերաբերյալ կառավարության փոխզիջումային տարբերակը. խմբակցություններում նրանց գերակշիռ մեծամասնությունը քվեարկվեց դրա օգտին. դրանով իսկ դյուրացնելով Բունդեսթագի կողմից ընդունումը, որի համար անհրաժեշտ էր պատգամավորների 2/3-ի համաձայնությունը: Հաջորդ օրը մայիսի 26-ին տեղի ունեցած քվեարկության արդյունքները գերազանցեցին բոլոր սպասելիքները. 656 պատգամավորներից կողմ քվեարկեցին ավելի քան 500-ը:

Կարեւորագույն այս որոշումը, որ դեռ պետք է ներկայացվեր խորհրդարանի II պալատի Բունդեսրատի հաստատմանը, հասարակության կողմից ընդունվեց ոչ միայն գոհունակությամբ: Ի բողոք այդ որոշման, հաջորդ օրը Բոննում 10000 ցուցարարներ երթ արեցին Բունդեսթագի շենքը: Կանխազգալով վտանգի մեծությունը եւ անցանկալի հետեւանքներից խուսափելու նպատակով իշխանություններն ուժեղացրին շենքի պաշտպանությունը:

Ցուցարարները պահանջում էին վերացնել ընդունված որոշումը, որը, նրանց կարծիքով, էապես փոխում է իրենց երկիրը: Փախստականների դեմ որոշում ընդունելը նշանակում է նրանց զրկել ապաստանի իրավունքից եւ պատնեշել Գերմանիան արտաքին աշխարհից: Ցուցարարների կարծիքով, նման քայլը նշանակում է երկրի դեմոկրատները համաձայն չէին փոխզիջումային այն տարբերակին: Նրանց կարծիքով, դա ոչ թե վտարանդիների խնդիրների լուծում է, այլ այդ խնդիրների բարդելը հարեւան պետությունների վրա:

Կոալիցիայի եւ ընդդիմության միջեւ այդ հարցի շուրջ սասկացող պայքարը, որ միայն շիկացրեց սրընթացը երկու ճակատներում, էական փոփոխություններ չմտցրեց: Կառավարության փորձագետները համաձայնության եկան ներքին գործերի նախարար Ռուդոլֆ Զայբերսի (ՔԴՄ) հետ «ապահով երրորդ երկրների» շրջանակներն ընդլայնելու վերաբերյալ: Այսինքն իշխանությունները, առանց քննելու փախստականների ապաստան ստանալու խնդրանքը, նրանց, բացի վերոհիշյալ երկրներից, ետ են ուղարկում նաեւ Ֆինլանդիա, Շվեդիա, Նորվեգիա, Սլովակիայի Հանրապետություն եւ Հունգարիա: Ճիշտ է, իշխանությունների նման նախաձեռնությունը բխում է սեփական ժողովրդի շահերից եւ ուղղված է նրա բարությանը, այնուամենայնիվ այն համընդհանուր հավանության չարժանացավ: Դեռ ավելին, ապաստան ստանալու իրավունքի վերաբերյալ փոխզիջումային տարբերակը քննադատում են այն քաղաքացիները, որոնք առաջնորդվում են ոչ միայն զուտ ազգային շահերով: Նրանց համար 16-րդ հոդվածի փոփոխությունը Գերմանիայի հիմնական օրենքի աղավաղումն է, մարդու ապաստան ստանալու իրավունքի բովանդակության աղավաղումը, իսկ դա նշանակում է, որ այդ իրավունքը որոշ այդպիսին դադարում է գոյություն ունենալ:

Համենայն դեպս, հասարակության տարբեր խավերի այդ հայացքներն ու տրամադրություններն արտահայտող եւ ճգնաժամի մեջ գտնվող սոցիալ-դեմոկրատների դիմադրությունը որոշակիացավ, երբ Բունդեսթագում քվեարկման դրվեց 16-րդ հոդվածի վերաբերյալ կառավարության փոխզիջումային տարբերակը. խմբակցություններում նրանց գերակշիռ մեծամասնությունը քվեարկվեց դրա օգտին. դրանով իսկ դյուրացնելով Բունդեսթագի կողմից ընդունումը, որի համար անհրաժեշտ էր պատգամավորների 2/3-ի համաձայնությունը: Հաջորդ օրը մայիսի 26-ին տեղի ունեցած քվեարկության արդյունքները գերազանցեցին բոլոր սպասելիքները. 656 պատգամավորներից կողմ քվեարկեցին ավելի քան 500-ը:

Կարեւորագույն այս որոշումը, որ դեռ պետք է ներկայացվեր խորհրդարանի II պալատի Բունդեսրատի հաստատմանը, հասարակության կողմից ընդունվեց ոչ միայն գոհունակությամբ: Ի բողոք այդ որոշման, հաջորդ օրը Բոննում 10000

Փոքր-ինչ զարմանք է հարուցում անհաշտվողական սոցիալ-դեմոկրատների հայացքների «հեղաշրջումը»: Որոշման օգտին են արտահայտվել Բունդեսթագում խմբակցության ղեկավար Ուլրիխ Քլոզեն եւ կուսակցության նախագահի պաշտոնակատար Յոհաննես Ռաուն: Ուլրիխ Քլոզեի համոզմամբ, գերմանացիների 70 տոկոսը կողմնակից է 16-րդ հոդվածի փոփոխմանը: Նոր որոշումը չի վերացնում վտարանդիների խնդիրը, հետեւաբար Գերմանիան ոչեմ է պայքարի դրա պատճառների դեմ երկրից դուրս, մյուս երկների հետ համագործակցելով:

Այս բնագավառում Գերմանիայի իշխանությունները (որոնք վտարանդիության խնդիրը դարձրեցին բարդում են հարեւան պետությունների վրա) մեծահոգաբար «վարչական օգնություն» են առաջարկում: Արդեն սկսվել են բանակցությունները «ապահով երրորդ երկրներից» Լեհաստանի եւ Չեխիայի Հանրապետությունների հետ: Նեղաբերվում է, որ այս տարվա երկրորդ կեսին Լեհաստանը Գերմանիայից կընդունի առավելագույն 12000 վտարանդիներ: Դրա դիմաց Գերմանիան, Լեհաստանի սահմանները ամրապնդելու նպատակով, իր վրա կվերցնի սահմանապահների նյութական ու վերապատրաստման ծախսերը:

Ի՞նչ է ստացվում. ապաստանի իրավունքը փոփոխված տարբերակով ձեւականորեն պահպանվում է սահմանադրության մեջ, իսկ իրականում այն վերացվում է:

Ինչ վերաբերում է խորհրդարանի աշխատանքներին, միայն ավելացնենք, որ Բունդեսթագը որոշումը հաստատեց առանց էական տարաձայնությունների, ավելի-խաղաղ մթնոլորտում: Արդեն հանդարտվել էին կրքերը, հասարակության դժգոհության ալիքը ետ էր նահանջել: Որոշման իրագործման ճանապարհն ազատ է, այն ուժի մեջ կմտնի հուլիսի 1-ին:

Պառակտված երկրի ու պառակտված ժողովրդի տխուր անցյալը խորհրդանշող Բեռլինի պատը քանդվեց հենց այդ ժողովրդի գերմանացիների կամքով: Այսօր, չորս տարի անց, Եվրոպական համագործակցության շրջանակներում ամենաաշխույժ գործունեություն ծավալած Գերմանիան իրեն շրջափակում է քաղաքական պատնեշով ի շահ սեփական ժողովրդի եւ Միացյալ Եվրոպայի:

ՎԱՀԱՆ ԽԵՉՈՅԱՆ

Կարծիք

Ամերիկաբնակ կուբացիներն օգնում են իրենց հայրենակիցներին

30 տարվա քաղաքական նոպաներով թելադրված տնտեսական արգելքներից ու սահմանափակումներից հետո այժմ ԱՄՆ-ից դեպի Կուբա են առաքվում յուրաքանչյուրը 475 դոլար արժողությամբ սննդի փաթեթներ, որոնք պարունակում են պահածոյացված միս եւ ծուկ, սուրճ, կաթ, աղուր եւ շոկոլադ: Անշարժ չլինելով իրենց հարազատների ճակատագրի հանդեպ, ԱՄՆ-ի Մայամի ծովեզրյա քաղաքում (Ֆլորիդայի նահանգ) հաստատված նախկին կուբացիները ձեռք են բերում այդ ծանրոցները «Կուբա փաթեթս» ընկերությունից, որի տնօրեն Միլտոն Սերեսը խոստովանում է, որ «լավ շահույթ է ստանում» այդ առաքումներից: Սննդամթերքից առաջ ընկերությունը պատրաստել էր հագուստեղենի եւ դեղամիջոցների փաթեթներ: Ամերիկաբնակ կուբացիներին այժմ արտոնված է նաեւ 300 դոլարի չափով դրամական օժանդակություն ցուցաբերել իրենց բարեկամներին Կուբայում, որտեղ դրամափոխանակման պաշտոնական կուրսը երկու պեսո է մեկ դոլարի դիմաց: Սեւ շուկայում այն 60 պեսո արժի:

Այսուհանդերձ, ԱՄՆ գաղթած բոլոր կուբացիներն չեն, որ համաձայն են այսօրինակ օժանդակություններին: Նրանց կարծիքով, ինչքան օժանդակությունը մեծ լինի, այնքան տանելի կդառնան պայմանները Կուբայում, եւ այնքան ավելի երկար Ֆիդել Կաստրոն կմնա իշխանության ղեկին: Ամերիկա-կուբայական Ազգային հարստության գլխավորությամբ մի խումբ ծայրահեղականներ նույնիսկ գտնում են, որ տնտեսական սահմանափակումները, ընդհակառակը, պետք է ուժեղացնել, որպեսզի տապալվի Կաստրոյի կառավարությունը: Մինչ այդ, սակայն, սովորական մարդիկ չեն կարող առաջին հերթին չանհանգստանալ իրենց մտերիմների առողջական եւ ֆինանսական բարեկեցությամբ: Երբ լուրեր սկսեցին տարածվել, որ թերսնուցման հետեւանքով այդի հիվանդություն է ծայր առել Կուբայում, նրանք անմիջապես վիտամիններով լի ծանրոցներ սկսեցին ուղարկել այնտեղ: Հուլիսի 11-ին սպասվում է տոգենավով 11 ամերիկյան քաղաքներից հավաքված մեծ քանակությամբ մարդասիրական օգնություն հասցնել Կուբա:

Դատելով Կուբայում գնալով վատթարացող պայմաններից, քաղաքական մեկնաբանները գտնում են, որ Կաստրոն հավանաբար կթուլացնի իր կարծր քաղաքականությունը:

The Economist, 21 մայիս

Լուրերի Հոսք

ՆԱՏՕ-ի միջուկային զինանոցը կրճատվել է 80 տոկոսով

Հյուսիսատլանտյան դաշինքի պատգամավորության նախարարները Բրյուսելում ավարտված ՆԱՏՕ-ի ռազմական պլանավորման կոմիտեի նստաշրջանում քննարկեցին համաստեղ պատգամավորության պլանավորման հիմնական ուղղությունները, ինչպես նաեւ «սառը պատերազմի» ավարտից հետո ընդունված նոր ռազմավարության պահանջներին միացյալ զինված ուժերի հարմարեցման ընթացքը: Եզրափակիչ հայտարարության մեջ մասնավորապես նշվում է. «Եվրոպայում կատարված արմատական փոփոխությունները ընդհանուր առմամբ ամրապնդեցին Հյուսիսատլանտյան դաշինքի անվտանգությունը: Թեեւ երեկվա քաղաքական ու ռազմական վտանգներն այլեւս չկան, մեծացել է ճգնաժամերի ծագման վտանգը, որոնք կարող են զինված ուժերի գործադրում պահանջել դրանց կարգազրմանն ուղղված քաղաքական գործողություններին աջակցելու համար»: Նրանք ողջունեցին «աշխարհամասում զգալի ռազմական ուժ պահպանելու ԱՄՆ-ի որոշումը, որը կնպաստի ՆԱՏՕ-ի ապագա ծավալված խնդիրների կատարմանը»: ՆԱՏՕ-ի միջուկային պլանավորման խմբի նիստում հայտարարվեց 1991 թ. ընդունված որոշմանը համապատասխան Եվրոպայից ցամաքային մարտավարական միջուկային զենքի դուրսբերման վաղաժամկետ ավարտի մասին: Դրա շնորհիվ ՆԱՏՕ-ի միջուկային զինանոցը կրճատվել է 80 տոկոսով, նշվում է հայտարարության մեջ:

ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Ռուսաստանը ՄՎՀ-ին զիջումներ չի անի

Ռուսաստանի կառավարության եւ կենտրոնական բանկի տնտեսական քաղաքականության վերաբերյալ համատեղ հայտարարությունը պարունակում է դրամավարկային քաղաքականության խիստ սահմանափակումներ, որոնց իրագործումը կարող է կապված լինել լուրջ դժվարությունների հետ, հայտարարեց կենտրոնական բանկի փոխնախագահ Խանդուսեը: Ելույթ ունենալով «Համաշխարհային փորձը եւ Ռուսաստանի տնտեսությունը» միջազգային համաժողովում, նա հայտնեց. «Ռուսաստանի կենտրոնական բանկը չի ուզում երկակի խաղ խաղալ, անիրագործելի պարտավորություններ ստանձնելով հանուն ՄՎՀ պահեստային վարկի առաջին մասի ստացման: Բանկն անհրաժեշտ է համարում սկզբունքային քայլեր ձեռնարկել ֆինանսական համակարգի կայունացման ուղղությամբ եւ հայտարարություններն ամրապնդել իրական քաղաքականությամբ»:

ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Գայդարը պարզաբանում է Ռուսաստանի իրավիճակը

Ռուսաստանի նախագահի տնտեսական քաղաքականության հարցերի գծով խորհրդատու Ե. Գայդարը Տոկիոյում դատախոսությամբ հանդես գալով ճապոնիայի լիբերալ-դեմոկրատական կուսակցության կենտրոնակայանում, մասնավորապես հայտարարեց. «Բարեփոխականների նկատմամբ ընդդիմադիր նեոկոմունիստների եւ արմատական ազգայնամոլների կոալիցիան ամբողջ երկրում ունի բավական հզոր կազմակերպական հիմք: Իսկ նախագահին եւ վարվող տնտեսական քաղաքականությունը պաշտպանող ժողովրդավարական ուժերը չունեն քաղաքական այդպիսի կառույց: Բարեփոխումների ընթացքին աջակցող քաղաքական այդպիսի լայն կառույցի ստեղծումը այսօր թերեւս ամենատուր քաղաքական խնդիրն է Ռուսաստանում, որի շուրջն այժմ հենց աշխատանք է կատարվում: Ես կարծում եմ, որ մեզ կհաջողվի այս ուղղությամբ առաջխաղացում արձանագրել բառացիորեն մոտ օրերս: 1993 թ. գարունը նշանավորվեց այսպես կոչված ցենտրիստական բլոկի արագ տաղալմամբ, որը նույնանում է այնպիսի դեմքերի հետ, ինչպիսիք են Ա. Ռուցկոյը, Ն. Տրավկինը, Ա. Վոլսկին: Այդ բլոկը բառացիորեն լուծվեց քաղաքական գույների բազմազանության մեջ», ասաց Ե. Գայդարը:

ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ

digitised by A.R.A.R.@

Լուրերի Հոսք

Մոնղոլիայի նոր նախագահի ընտրություններ

Ինչպես հաղորդեցին Նեգա գործակալության թղթակցին Մոնղոլիայի դեսպանատանը, բարձրագույն ոլեսական ոլաշտոնին հավակնում են ներկա նախագահ Օյիրբատը եւ Մոնղոլիայի ժողովրդահեղափոխական կուսակցության օրգան «Ունեն» թերթի խմբագիր Տուդեւը: Վերոհիշյալ կուսակցությունն աջակցում է երկու թեկնածուներին: Օրլիքպատին աջակցում են նաեւ սոցիալ-դեմոկրատական եւ միացյալ դեմոկրատական կուսակցությունները, որոնք կազմում են Մոնղոլիայի կառավարության ներկա կուրսին ընդդիմադիր միասնական դաշինք: 1992 թ. սահմանադրության ընդունումից հետո առաջին նախագահական ընտրություններին որոշես դիտորդ հրավիրվել են Ռուսաստանի, ԱՄՆ-ի, ինչպես նաեւ ՄԱԿ-ի ներկայացուցիչները: ՆՏ

Խասբուլատովը չի փոխում կարծիքը

«Նովգորոդսկիե վեդոմոստի» թերթում հրապարակվել է Ռ. Խասբուլատովի «Հնարավո՞ր է արդյոք Ռուսաստանի բալկանացում» հոդվածը: Խասբուլատովը մասնավորապես գրում է, որ Ռուսաստանում 1991 թ. նախագահության հաստատության հիմունքներով իշխանությունների բաժանումը կարող է կործանարար լինել: Իրավիճակը փոխելու համար կա երկու ուղի: Առաջինը իշխանության ճյուղերից մեկի՝ նախագահական ճյուղի կտրուկ ուժեղացումն է եւ բռնապետության հաստատումը: Հենց այս տարբերակն է պարունակում սահմանադրության նախագահական նախագիծը: Երկրորդ տարբերակն իրատեսական է եւ ճշմարիտ ժողովրդավարական: Այն ենթադրում է պետական իշխանության համակարգի ստեղծում, հակակշիռների ոչ թե շատ հստակորեն արտահայտված համակարգով: Հոդվածի վերջում ասվում է. «Պետք է խոստովանել, որ թե հանրաքվեն եւ թե սահմանադրության նոր նախագիծը խիստ ուժեղացրել են շրջանացումը: Այս պայմաններում մեծանում է այնպիսի սահմանադրության ընդունման վտանգը, որը կվավերացնի ռուսական պետականության փլուզման գործընթացները: Անհամեմատ լավ կլիներ գնալ գործող սահմանադրության ուղղումների ուղիով: Բայց այս նպատակահարմար դիրքորոշումը հազիվ թե ծեռնտու լինի նրանց, ովքեր գիտակցաբար ձգտում են հասնել պետության փլուզմանը», գրում է Խասբուլատովը

ԱՐՍԵՆՊՐԵՍ ԻՏԱՌ-ՏԱՍՍ

«Էրկը» կոչ է անում աջակցել Քարիմովին

Ուզբեկստանում պատշաճորեն գրանցված ընդդիմադիր միակ կուսակցությունը՝ «Էրկը» դիմել է երկրի բոլոր քաղաքական կուսակցություններին ու շարժումներին, քաղաքացիներին, կոչ անելով պաշտպանել նախագահ Իսլամ Քարիմովի քաղաքականությունը: «Մենք գտնում ենք, ասվում է դիմումի մեջ, որ հանուն Ուզբեկստանի անկախության ամրապնդման, անկախության ուղիով նրա առաջխաղացման ազգային համաձայնությունն ամրապնդելու՝ մրցակցության ուղին ժողովրդի ընտրած նախագահ Քարիմովի շուրջը բոլոր առողջ ուժերի, քաղաքական կուսակցությունների ու շարժումների հանձնումն է: Ուզբեկստանում հաշտության ու համաձայնության պահպանման խնդիրը պետք է վեր դասվի բոլոր դասակարգային, կուսակցական եւ անձնական շահերից»: Ժողովրդավարական «Էրկ» կուսակցությունը գրանցվեց 1991 թվականին: Երկրի նախագահական ընտրություններում դրա նախագահ բանաստեղծ Մուհամմադ Սալիհի օգտին քվեարկեց ընտրողների մոտ 13 տոկոսը: ՌՖ

Մականունների զեստեղարան Վիլնյուսում

Վիլնյուսի գլխավոր կոմիսարիատում ստեղծվել է հանցագործների մականուններին առնչվող տվյալների զեստեղարան: Քրեական աշխարհում այս կամ այն մականունով հայտնի մարդկանց վերաբերող օպերատիվ տեղեկությունները կօգնեն ոստիկանների աշխատանքին: Ներկայումս զեստեղարանում կա 8000 մականուն: Սնարք

Մարզական

Ռաֆայել Մեհրաբյան. «ԲՈԼՈՐԸ ՊԵՏՔ Է ՀԱՇՎԻ ՆՍՏԵՆ ՄԵԶ ՀԵՏ»

Ֆինլանդիայի Տամպերե քաղաքում տեղի ունեցած բոքսֆամարտի աշխարհի հերթական առաջնությունում, որտեղ Հայաստանն առաջին անգամ հանդես եկավ առանձին թիմով, նոր փայլուն էջ գրեցին կռվարվեստները: Ինչպես հայտնի է, մեր բոքսֆամարտիկներից Նշան Մունչյանը նվաճումների իր հարուստ ավարին ավելացրեց ամենագլխավորը՝ աշխարհի չեմպիոնի ոսկե մեդալը, Արշակ Ավարսակյանը տուն վերադարձավ բրոնզե պարգեւով, իսկ Հայաստանի հավաքականը իրենից առաջ թողնելով միայն Կուբայի, Բուլղարիայի եւ Ռումինիայի հավաքականներին, 76 թիմերի միջեւ գրավեց պատվավոր 4-րդ տեղը: «Այսօր հայկական բոքսֆամարտը կարող է չափվել աշխարհի ամենաուժեղների հետ: Բոլորը պետք է հաշվի նստեն մեզ հետ», ասում է ՀՀ հավաքականի գլխավոր մարզիչ ՌԱՖԱՅԵԼ ՄԵՀՐԱԲՅԱՆԸ:

- Խնդրում ենք մանրամասն պատմեք մեր տղաների ելույթների մասին:

- Նախ կուզեի նշել մրցումների անբերի կազմակերպվածության մասին: Շատ երկրներում եմ եղել, շատ մրցումների եմ մասնակցել, բայց նման բան չեմ տեսել:

Ինչ վերաբերում է մեր տղաներին, պիտի ասեմ բացառության բոլորն էլ գերազանց հանդես եկան եւ նվազագույն տեղը եղավ 5-ից 8-րդը: Ընդ որում նրանք, ովքեր մրցանակակիրներ չդարձան, իրենց մրցակիցներին զիջեցին հավասար պայքարում: Սկսեմ ըստ հերթականության:

Նշան Մունչյանն (48 կգ) այսօր իրոք աշխարհի ուժեղագույն բոքսֆամարտիկներից մեկն է: Նա անբերի անցկացրեց առաջնությունը, ցուցաբերելով հարուստ տեխնիկա եւ նուրբ տակտիկա: Մունչյանը 4 մարտ անցկացրեց եւ բոլորն էլ տարբեր ոճերով: Նա իր մրցակիցներին հաղթեց բացահայտ առավելությամբ: Նա միշտ վստահ է իր ուժերին եւ կողից զգում ես, որ պատահականություններ չեն կարող լինել: Անկասկած օգնեց նաեւ մեծ փորձը: Մունչյանն առաջին մարտում 23:9 հաշվով հաղթեց ֆրանսիացի Ինոմ Բեռնարդին, երկրորդում նրա մրցակիցն էր Ռուսաստանի ներկայացուցիչ Գայֆուլինը, որը մինչ այդ հաղթել էր աշխարհի եւ օլիմպիական խաղերի չեմպիոն կուբացի Մարչելո Ռոգելոյին: Ռուսները Գայֆուլինի հետ մեծ հույսեր էին կապում, սակայն Մունչյանը նրան հաղթեց 19-0 հաշվով: Բացահայտ էր նաեւ առավելությունը 3-րդ մրցակցի՝ ամերիկացի Գուարդադոյի նկատմամբ: Մունչյանը հաղթեց 8 միավորի տարբերությամբ: Եզրափակիչում Մունչյանի մրցակիցը բուլղարացի Դանիել Պետրովն էր, բարսելոնյան օլիմպիադայի արծաթե մեդալակիրը, աշխարհի նախորդ առաջնության մրցանակակիրը: Այստեղ էր մեր բոքսֆամարտիկի առավելությունը շոշափելի էր:

Լեոնիկ Պապյանը (51 կգ) 1-ին մարտում գեղեցիկ ոճով հաղթեց աշխարհի չեմպիոնի կոչման հավակնորդներից մեկին աշխարհի երիտասարդների չեմպիոն



բուլղարացի Ռոդոլֆ Օժինոնին: Յուրաքանչյուր ռաունդում վերջինս նոկդաունի ենթարկվեց եւ 3-րդ ռաունդի վերջում բացահայտ առավելության պատճառով մարտն ընդհատվեց եւ հաղթանակը շնորհվեց Պապյանին: Բոնգի հաջող մրցավարում Պապյանը հանդիպեց եգիպտացի Հասսանի հետ: Մեր բոքսֆամարտիկի հաղթանակը կասկած չէր հարուցում, սակայն 1-ին ռաունդի 1-ին րոպեներին Լեոնիկը վնասեց իր աջ ձեռքը (հիմնական զենքը) եւ չկարողացավ հասնել նոքաուտի:

Արթուր Միխայելյանը (54 կգ) հետաքրքրությամբ հաղթելով Դիմիտեր Մամֆրեդին (Ավստրիա) եւ Տրուիլլոյին (Պուերտո Ռիկո), մրցանակային տեղից զրկվեց, գերազանահատելով իր մրցակցի, աշխարհի երիտասարդների չեմպիոն կուբացի Կասամայորի հնարավորությունները: Միայն մարտի վերջում Միխայելյանը հասկացավ, որ մրցակիցն այդքան էլ սարսափելի չէ եւ կարելի է հաղթել նոքաուտ: Ինչպես, հավասար պայքարում նա զիջեց մրցակցին:

Կուզեցայի հաստատես նշել մեր առաջատարներից մեկի՝ **Մեխակ Ղազարյանի** (60 կգ) մասին: Նա այսօր աշխարհի ուժեղագույն բոքսֆամարտիկներից մեկն է, սակայն Տամպերեում առաջին անգամ կիրառված համակարգչային սիստեմի մրցավարության զոհ գնաց, որն էլ իրավացիորեն մասնագետների դժգոհություն առաջացրեց: Համակարգչային մրցավարությունն առայժմ կատարյալ չէ եւ մարդկանց ազատում է պատասխանատվությունից: Պանամերիկյան խաղերի չեմպիոն, ԽՍՀՄ-ԱՄՆ մրցամարտի մասնակից, բազմափորձ ամերիկացի Լարրի Նիկոլսոնի հետ մենամարտի բոլոր ռաունդներում մրցավարները հաղթանակը տալիս էին Մեխակին: Համակարգիչը ընդհանուր հաշվածների հանակն էլ ճիշտ ցույց տվեց՝ 117:104 հօգուտ Ղազարյանի, սակայն 16:15 հաշվով հաղթանակը շնորհվեց Նիկոլսոնին, հանի որ հաղթանակը գրանցվում է միայն այն դեպքում, երբ մրցավարներից առնվազն երեքը համաձայն են սեղմում համակարգչի կոճակը, իսկ առանձին-առանձին գնահատականները հաշվի չեն առնվում:

Սիա Ղազարյան-Նիկոլսոն մենամարտի իրական պատկերը

1 ռաունդ
7-6, 9-8, 6-7, 13-10, 2-7 հաշիվը՝ 3-2
2 ռաունդ
11-9, 8-6, 5-6, 10-8, 3-6 հաշիվը՝ 3-2
3 ռաունդ
8-11, 7-7, 6-4, 13-1, 9-8 հաշիվը՝ 3-1
ընդամենը
26-26, 24-21, 17-17, 36-19, 14-21 հաշիվը՝ 117-104

Ինչպես, չեմ կասկածում, որ եվրոպայի առաջնությունում (սեպտեմբեր, Թուրքիա) Մեխակ Ղազարյանը իրեն կդրսեւորի լավագույն կողմերով:

19-ամյա **Վահե Քոչարյանը** (71 կգ) 1-ին անգամ հանդես գալով նման մրցումներում եւ չունենալով մեծ փորձ, 1-ին օրվա հետաքրքիր դարձավ: Նրա հաղթանակը իտալացի Պետրուչիո Անտոնիոյի նկատմամբ տպավորիչ էր, մարտը լավագույնը ճանաչվեց եւ Քոչարյանն արժանացավ հատուկ գավաթի: Վահեն պարտվեց Դելիբասիին (Հոլանդիա), որն անհարմար բոքսֆամարտիկ էր եւ դասական ոճ չուներ:

Մեր երկրորդ դափնեկիրը՝ **Արշակ Ավարսակյանը** (91 կգ) առաջին 2 մարտը գերազանց անցկացրեց, վստահորեն հաղթելով Թուրքիայի ներկայացուցիչ Գյունել Ֆիրեթին, որը բարսելոնյան օլիմպիադայում 3-րդ տեղ էր գրավել եւ ազատ երկրի անվան տակ հանդես եկած Կլոդյանովի չին: Վերջինիս հետ մենամարտն ընդհատվեց 2-րդ ռաունդում բացարձակ առավելության պատճառով: Կիսաեզրափակիչում Ավարսակյանի պարտության պատճառն այն էր, որ ընդհանրապես Քոչարյանի պես տարբեր ոճի բոքսֆամարտիկների դեմ դիչ է կռվել եւ ընդհանրապես դիչ մարտեր է անցկացրել:

Մեր հաջողությունը բոլոր տղաների նվիրվածության արդյունքն է: Չպետք է մոռանալ, որ հայտնի պատճառներով հնարավոր չէր սիստեմատիկ մարզումներ անցկացնել: Միայն 13 օր լիարժեք հավաք ենք կազմակերպել-Սոչիում եւ վերջին 16 օրն էլ հավաքականի հետ համատեղ այս նախամենկնարկային մարզումները երկուսեք շատ օգտվեց էին: Մենք իրար լավ տարիքից մրցակիցներ եղանք:

Սոչիից օգտվելով ուզում եմ շնորհակալություն հայտնել հանրապետական տարրտվարչությանը, բոքսֆամարտի ֆեդերացիային, ովքեր ծանր պայմաններում ոչինչ չխնայեցին մեր թիմի նախապատրաստության համար: Շնորհակալություն նաեւ մարզիչներին, ովքեր իրենց դերն ունեն հավաքականի հաջողության մեջ:

- Առաջիկա ծրագրերն ինչպիսի՞ն են:

- Հունիսի 6-ից կսկսենք նախապատրաստվել Եվրոպայի առաջնությանը: 14-օրյա հավաք կկազմակերպենք Սոչիում աշխարհի առաջնությանը մասնակցած տղաների ուժերը վերականգնելու համար, որից հետո-3 փուլով, հուլիսի 1-ից օգոստոսի վերջը հավաքներ կկազմակերպենք Ծաղկաձորում, կրկին Սոչիում, կամ Կիսլովոդսկում եւ անդրյանց որեւէ թիմի հետ համատեղ: Պլանավորում ենք, որ մինչեւ Եվրոպայի առաջնությունը յուրաքանչյուր բոքսֆամարտիկ 3-ից 6 մենամարտ անցկացնի: Հունիսի 16-ից 20-ը Գյումրիում տեղի կունենա ՀՀ մեծահասակների առաջնությունը: Մտադիր ենք Եվրոպայի առաջնությանն ավելի մեծ կազմով մասնակցել: ■

Աթենք. Դարձյալ շախմատային կրքեր աշխարհի թագի շուրջ

Հունաստանի շախմատային ֆեդերացիայի նախագահ, շախմատի միջազգային ֆեդերացիայի (ՖԻԴԵ) գլխավոր քարտուղար Գեորգիոս Մակրոպուլոսի հրավերով մեկ շաբաթ տեւած պատշգամբային այցով Աթենքում հյուրընկալվեց Հայաստանի շախմատային ֆեդերացիայի պատասխանատու քարտուղար, «Շախմատային Հայաստան» հանդեսի գլխավոր խմբագիր ԳԱԳԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ:

Հունաստանը կարեւոր շախմատային կենտրոն է դառնում: Հենց այս օրերին ՖԻԴԵ-ի շաբաթ-բնակարանը Լյուցերնից տեղափոխվեց Աթենք: Եկող տարի Սալոնիկում կընթանա շախմատի 31-րդ համաշխարհային օլիմպիադան եւ ՖԻԴԵ-ի հերթական կոնգրեսը:

Այցի սկզբում Հայաստանի ներկայացուցիչը մասնակցեց ՖԻԴԵ-ի գործկոմի նիստին, որտեղ երկու օր շարունակ հիմնականում քննարկվում էին «աղտաղաբած» Կասպարովի եւ Շորթի դեմ կիրառվելիք պատժամիջոցները եւ ներկայիս չեմպիոնի ու հավակնորդի փոխարեն Կարպովի եւ Ցիմանի միջեւ աշխարհի առաջնության մրցախաղի անցկացման հարցը: Ընդ որում, Յան Ցիմանը, [illegible] հագեցված անձ [illegible] հանդերձ, հարմար համարեց անձամբ ժամանել Աթենք եւ կասպարովին քննադատել [illegible]նոիսի խստությամբ, որը [illegible] էր զիջում Գարրիի [illegible] հակառակորդ նախագահ Կամպոմանեսի տնին: Ընդհանրապես գործկոմի անդամները շատ մարտական էին տրամադրված եւ, փաստորեն, այրեցին աշխարհի չեմպիոնի հետ որեւէ փոխզիջման տանող կամուրջները:

Վերջնականապես որոշվեց այս տարվա աշնանը անցկացնել մենամարտ հավակնորդների մրցումներում անհաջողություն կրած Կարպովի եւ Ցիմանի միջեւ, որի հաղթողին ՖԻԴԵ-ն ցանկանում է աշխարհի չեմպիոն հռչակել: Գալով Կասպարովին եւ Շորթին, գործկոմը նրանց կոչ արեց պրոֆեսիոնալ շախմատիստների կազմակերպության շրջանակներում մրցախաղ չանցկացնել, հակառակ դեպքում սպառնալով զրկել էլոյի գործակիցներից եւ փաստորեն որակազրկել նրանց: Այս որոշման օգտին քվեարկեցին գործկոմի ինը անդամներ, դեմ երկուսը:

Ակնհայտ էր, որ նման որոշումներից հետո չեմպիոնը եւ հավակնորդը, այլեւս կորցնելու ոչինչ չունենալով, առավել հաստատակամ պետք է ձգտեն իրականացնել իրենց մտահղացումը: Եւ իսկապես, արդեն գործկոմի նիստից հետո Կասպարովը Պարոյանին: Բոնգի հաջող մրցավարում Պարոյանը հանդիպեց եգիպտացի Հասսանի հետ: Մեր բոքսֆամարտիկի հաղթանակը կասկած չէր հարուցում, սակայն 1-ին ռաունդի 1-ին րոպեներին Լեոնիկը վնասեց իր աջ ձեռքը (հիմնական զենքը) եւ չկարողացավ հասնել նոքաուտի:

Արթուր Միխայելյանը (54 կգ) հետաքրքրությամբ հաղթելով Դիմիտեր Մամֆրեդին (Ավստրիա) եւ Տրուիլլոյին (Պուերտո Ռիկո), մրցանակային տեղից զրկվեց, գերագնահատելով իր մրցակցի, աշխարհի երիտասարդների չեմպիոն կուբացի Կասամայորի հնարավորությունները: Միայն մարտի վերջում Միխայելյանը հասկացավ, որ մրցակիցն այդքան էլ սարսափելի չէ եւ կարելի է հաղթել նոքաուտ: Ինչպես, հավասար պայքարում նա զիջեց մրցակցին:

Կուզեցայի հաստատես նշել մեր առաջատարներից մեկի՝ **Մեխակ Ղազարյանի** (60 կգ) մասին: Նա այսօր աշխարհի ուժեղագույն բոքսֆամարտիկներից մեկն է, սակայն Տամպերեում առաջին անգամ կիրառված համակարգչային սիստեմի մրցավարության զոհ գնաց, որն էլ իրավացիորեն մասնագետների դժգոհություն առաջացրեց: Համակարգչային մրցավարությունն առայժմ կատարյալ չէ եւ մարդկանց ազատում է պատասխանատվությունից: Պանամերիկյան խաղերի չեմպիոն, ԽՍՀՄ-ԱՄՆ մրցամարտի մասնակից, բազմափորձ ամերիկացի Լարրի Նիկոլսոնի հետ մենամարտի բոլոր ռաունդներում մրցավարները հաղթանակը տալիս էին Մեխակին: Համակարգիչը ընդհանուր հաշվածների հանակն էլ ճիշտ ցույց տվեց՝ 117:104 հօգուտ Ղազարյանի, սակայն 16:15 հաշվով հաղթանակը շնորհվեց Նիկոլսոնին, հանի որ հաղթանակը գրանցվում է միայն այն դեպքում, երբ մրցավարներից առնվազն երեքը համաձայն են սեղմում համակարգչի կոճակը, իսկ առանձին-առանձին գնահատականները հաշվի չեն առնվում:

Սիա Ղազարյան-Նիկոլսոն մենամարտի իրական պատկերը

1-ին ռաունդ
7-6, 9-8, 6-7, 13-10, 2-7 հաշիվը՝ 3-2
2 ռաունդ
11-9, 8-6, 5-6, 10-8, 3-6 հաշիվը՝ 3-2
3 ռաունդ
8-11, 7-7, 6-4, 13-1, 9-8 հաշիվը՝ 3-1
ընդամենը
26-26, 24-21, 17-17, 36-19, 14-21 հաշիվը՝ 117-104

Ինչպես, չեմ կասկածում, որ եվրոպայի առաջնությունում (սեպտեմբեր, Թուրքիա) Մեխակ Ղազարյանը իրեն կդրսեւորի լավագույն կողմերով:

19-ամյա **Վահե Քոչարյանը** (71 կգ) 1-ին անգամ հանդես գալով նման մրցումներում եւ չունենալով մեծ փորձ, 1-ին օրվա հետաքրքիր դարձավ: Նրա հաղթանակը իտալացի Պետրուչիո Անտոնիոյի նկատմամբ տպավորիչ էր, մարտը լավագույնը ճանաչվեց եւ Քոչարյանն արժանացավ հատուկ գավաթի: Վահեն պարտվեց Դելիբասիին (Հոլանդիա), որն անհարմար բոքսֆամարտիկ էր եւ դասական ոճ չուներ:

Մեր երկրորդ դափնեկիրը՝ **Արշակ Ավարսակյանը** (91 կգ) առաջին 2 մարտը գերազանց անցկացրեց, վստահորեն հաղթելով Թուրքիայի ներկայացուցիչ Գյունել Ֆիրեթին, որը բարսելոնյան օլիմպիադայում 3-րդ տեղ էր գրավել եւ ազատ երկրի անվան տակ հանդես եկած Կլոդյանովի չին: Վերջինիս հետ մենամարտն ընդհատվեց 2-րդ ռաունդում բացարձակ առավելության պատճառով: Կիսաեզրափակիչում Ավարսակյանի պարտության պատճառն այն էր, որ ընդհանրապես Քոչարյանի պես տարբեր ոճի բոքսֆամարտիկների դեմ դիչ է կռվել եւ ընդհանրապես դիչ մարտեր է անցկացրել:

Մեր հաջողությունը բոլոր տղաների նվիրվածության արդյունքն է: Չպետք է մոռանալ, որ հայտնի պատճառներով հնարավոր չէր սիստեմատիկ մարզումներ անցկացնել: Միայն 13 օր լիարժեք հավաք ենք կազմակերպել-Սոչիում եւ վերջին 16 օրն էլ հավաքականի հետ համատեղ այս նախամենկնարկային մարզումները երկուսեք շատ օգտվեց էին: Մենք իրար լավ տարիքից մրցակիցներ եղանք:

Սոչիից օգտվելով ուզում եմ շնորհակալություն հայտնել հանրապետական տարրտվարչությանը, բոքսֆամարտի ֆեդերացիային, ովքեր ծանր պայմաններում ոչինչ չխնայեցին մեր թիմի նախապատրաստության համար: Շնորհակալություն նաեւ մարզիչներին, ովքեր իրենց դերն ունեն հավաքականի հաջողության մեջ:

- Առաջիկա ծրագրերն ինչպիսի՞ն են:

- Հունիսի 6-ից կսկսենք նախապատրաստվել Եվրոպայի առաջնությանը: 14-օրյա հավաք կկազմակերպենք Սոչիում աշխարհի առաջնությանը մասնակցած տղաների ուժերը վերականգնելու համար, որից հետո-3 փուլով, հուլիսի 1-ից օգոստոսի վերջը հավաքներ կկազմակերպենք Ծաղկաձորում, կրկին Սոչիում, կամ Կիսլովոդսկում եւ անդրյանց որեւէ թիմի հետ համատեղ: Պլանավորում ենք, որ մինչեւ Եվրոպայի առաջնությունը յուրաքանչյուր բոքսֆամարտիկ 3-ից 6 մենամարտ անցկացնի: Հունիսի 16-ից 20-ը Գյումրիում տեղի կունենա ՀՀ մեծահասակների առաջնությունը: Մտադիր ենք Եվրոպայի առաջնությանն ավելի մեծ կազմով մասնակցել: ■

Չեմպիոնների հետ խաղալը հեշտ չէ

Մեր թղթակից ԳՐԻԳՈՐ ԱՍՏԻՐՃԱՅԱՆԸ հաղորդում է Ֆրանսիայից

Վալանսում ավարտվում է մինչեւ 20 տարեկան ֆուտբոլիստների միջազգային մրցաշարը: Խմբային մրցաշարի վերջին տուրում Հայաստանի հավաքականը հանդիպեց 1-ին տեղի գլխավոր հավակնորդ, աշխարհի չեմպիոն Բրազիլիայի հավաքականի հետ: Բրազիլացիները կրկին հաղթանակ տարան, այս անգամ մեր թիմի նկատմամբ 3:0 հաշվով եւ գրավելով 1-ին տեղը, եզրափակիչում մրցելու են մյուս խմբի հաղթողի՝ Ռուսաստանի հավաքականի հետ:

1-ին խմբի արդյունքները.
Հայաստան-Չեխիա 1:2
Բրազիլիա-Ալժիր 3:0
Հայաստան-Ալժիր 1:0
Բրազիլիա-Չեխիա 6:1
Բրազիլիա-Հայաստան 3:0
Չեխիա-Ալժիր 2:1

Մրցաշարային աղյուսակը

	Մ	Խ	Հ	Ո	Պ	Գ
1. Բրազիլիա	6	3	3	0	0	12-1
2. Չեխիա	4	3	2	0	1	5-8
3. Հայաստան	2	3	1	0	2	2-5
4. Ալժիր	0	3	0	0	3	1-6

Հայաստանի հավաքականը Վալանսին հրաժեշտ տալուց առաջ այսօր ընկերական խաղ կանցկացնի տեղի պրոֆեսիոնալներից կազմված ֆուտբոլիստների հետ: ■

«Օլիմպիկը» չեմպիոն

Մարսելի «Օլիմպիկը» Ֆրանսիայի առաջնության նախավերջին տուրում սենսացիոն հարկի տակ սկզբունքային մրցավեճում 3:1 հաշվով հաղթեց «Պարի Սեն Ժերմենին», անհասանելի դարձավ վերջին նիս համար եւ ժամկետից շատ, այն էլ 5-րդ անգամ անընդմեջ դարձավ Ֆրանսիայի չեմպիոն:

Իր հերթին «Պարի Սեն Ժերմենի» հետ 2-րդ տեղի համար մրցակցող «Մոնակոն» իր դաշտում 2:1 հաշվով կարեւոր հաղթանակ տարավ «Լիոնի» նկատմամբ: Ուշագրավ է, որ «Մոնակոյի» կազմում 2 անգամ էլ աչքի ընկավ 20-ամյա ժորաեւը, որի մայրը հայ է: Այս տաղանդավոր ֆուտբոլիստն արժանացել է մասնագետների համընդհանուր ուշադրությանը եւ դարձել Ֆրանսիայի առաջնության արդյունավետ խաղացողներից մեկը:

Գլխավոր ոմբարկուն Մարսելի «Օլիմպիկում» հանդես եկող հարավսլավացի Բոկսիչն է, որը խփել է 23 գնդակ:

Սիա Ֆրանսիայի 1-ին դիվիզիոնի առաջնության վերջին տուրից առաջ 1-ին 5 տեղը գրավող թիմերի արդյունքները.

	Մ	Խ
1. Օլիմպիկ	55	37
2. Պարի Սեն Ժերմեն	49	37
3. Մոնակո	49	37
4. Բորդո	46	37
5. Նանս	45	37

Բաժինը վարում է ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Բանակ

ԿՐԿԻՆ ՌՈՒՍ ՄԱՀԱՊԱՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը մայիսի 28-ին կրկին դիմել է Ադրբեջանի նախագահ Աբուլֆազ Էլչիբեյին խնդրելով ներում շնորհել ռուսաստանցի վեց զինծառայողներին: Ինչպես հայտնի է, նրանցից հինգը Հայաստանում տեղաբաշխված յոթերորդ բանակի նախկին զինծառայողներ են, որոնք Ադրբեջանի տարածքում մասնակցել են ռազմական գործողություններին եւ մայիսի 12-ին Ադրբեջանի Գերագույն դատարանի որոշմամբ դատապարտվել մահվան: Վեցերորդ զինծառայողը դատապարտվել է 15 տարվա ազատազրկման: Ըստ Ռուսաստանի նախագահի լրատվական ծառայության, նամակում Ելցինը հույս է հայտնել, որ Էլչիբեյն անհարթ չի մնա ռուսաստանցի զինծառայողների ճակատագրի հանդեպ եւ կօգտագործի ներում շնորհելու իր սահմանադրական իրավունքը: Ադրբեջանի եւ Ռուսաստանի ժողովուրդներին կաղում է դարավոր բարեկամությունն ու փոխադարձ հարգանքը, ասվում է նամակում, եւ նման մարդասիրական քայլն ըստ արժանվույն կգնահատվի ոչ միայն Ռուսաստանում, այլեւ ամբողջ աշխարհում:

Հիշեցնենք, որ ավելի վաղ ռուսաստանցի 6 զինծառայողներին ներում շնորհելու խնդրանքով Ադրբեջանի իշխանություններին են դիմել նաեւ Ռուսաստանի փոխնախագահ Ալեքսանդր Ռուցկոյը, խորհրդարանի նախագահ Ռուսլան Խասբուլատովն ու Գերագույն խորհուրդը, սակայն նախագահ Էլչիբեյից առայժմ որեւէ դրական չի ստացվել:

Մայիսի 30-ին Ադրբեջանի Նախարարների խորհրդի լրատվական ծառայությունը հերքել է որոշ զանգվածային լրատվության միջոցների տարածած այն տեղեկությունը, թե Ադրբեջանի իշխանությունները դատարաս են ազատ արձակել ռուսաստանցի 6 զինծառայողներին ռուսաստանյան վարկերի դիմաց: Լրատվական ծառայության դատախանատուները հերքել են, թե «այդ երկու հարցերը հանդիպումներում երբեք իրար հետ չեն կապվել: Նման դեպքերում առեւտուր տեղի չէ»:

Գուցե իսկապես նման դեպքերում առեւտուր տեղի չէ, սակայն այն հանգամանքը, որ ավելի վաղ Ղարաբաղի իշխանությունները հայտարարել են, թե Ռուսաստանցի զինծառայողների նկատմամբ դատավճռի իրականացման դեպքում Ղարաբաղը սիրված դիտի լինի նույն կերպ վարվել Ղարաբաղում գտնվող ադրբեջանցի ռազմագերիների հետ, եւ որ նույնիսկ դրանից հետո Ադրբեջանի իշխանությունները հարկ չհամարեցին խոսել այդ թեմայով, վկայում է, որ տվյալ դեպքում խոսք է գնում ոչ թե բարոյական արժեքների, այլ քաղաքական խաղերի մասին, եւ Ադրբեջանը ջանում է հնարավորին չափ շատ օգուտ քաղել ռուսաստանցի զինծառայողների շնորհիվ քաղաքական շահարկումների դիմելով եւ ջանալով նրանց ներկայացնել որպես Ռուսաստանի կողմից իր Հայաստանին ցուցաբերվող աջակցության աղբյուր:

ԱՐԱՄ ԱՐՈՒԹՅԱՆ

Կարգախոսում

Նախաձեռնողները հավանությամբ են ընդունել Հայաստանի որոշումը

Սկիզբը տես էջ 1

Խոսելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 822 բանաձեւում նշված «բնամական գործողություններ» արտահայտության մասին, մամուլի քարտուղարն ասաց, թե Ադրբեջանը չի ցանկանում վերացնել ոչ միայն շրջափակումը, այլեւ շարունակում է պետական մակարդակով իրականացնել բնամական քարոզչություն, որը մտնում է նմանատիպ գործողությունների մեջ եւ ստեղծում հակամարտության հոգեբանական եւ գաղափարական լարված մթնոլորտ: Հայաստան-Ղարաբաղ հարաբերությունների մասին խոսելիս Արամ Աբրահամյանը հայտնեց, որ Հայաստանը Ղարաբաղի վրա ազդելու երբեմն ավելի քիչ լծակներ ունի, քան այլ երկրներ, կամ այդ երկրների ինչ-ինչ ուժեր: Հաջորդը, Հայաստանը Ղարաբաղի վրա շատ ավելի քիչ կարող է ազդել, քան ԱՄՆ-ը եւ Թուրքիան Ադրբեջանի վրա: Մյուս գործոնն այն է, որ Ղարաբաղն ավելի մեծ ազդեցություն ունի Հայաստանի վրա, քան հակառակը:

Մամուլի քարտուղարը նաեւ հայտնեց, որ Հայաստանն օգնելու է Ղարաբաղին ֆինանսապես եւ տնտեսապես, անկախ նրանից, թե ինչպիսի իշխանություններ են լինելու Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում: Բայց հնարավոր է, որ այդ կարիքը չլինի, քանի որ, ըստ նրա, Ղարաբաղը ստեղծում է իր տնտեսությունը, որն այսօր աշխատում է ոչ ավելի վատ, քան Հայաստանինը, ունի սեփական էներգետիկ համակարգ ստեղծելու հնարավորություններ: Այդ դեպքում հարաբերությունները կլինեն ոչ թե օգնության մակարդակի, այլ կդառնան երկու իրավահավասար պետությունների հարաբերություններ, ասաց նա:

Մամուլի քարտուղարը հայտնեց նաեւ, թե հունիսի 3-ին Հռոմում նախատեսվում է անցկացնել ԵԱՀԽ Մինսկի խմբի անդամ 9 երկրների հանդիպում, որին չեն մասնակցի Հայաստանը եւ Ադրբեջանը: Մամուլի քարտուղարի կարծիքով, այնտեղ կքննարկվի այն հարցը, որը խոչընդոտել է նախորդ նախաձեռնության կատարումը:

Միաժամանակ Ռուսաստանի արտգործնախարարությանը մոտ կանգնած շրջանակներից մեզ հայտնեցին, որ Հռոմի խորհրդակցություններում կքննարկվեն ներկա պահին ստեղծված իրավիճակը, այն հարցերը, թե որտեղ եւ ինչ պետք է անեն նախաձեռնող կողմերի դիտորդները:

Մեր զրուցակիցը նաեւ նշեց, թե իրենք շարունակում են ամենօրյա խորհրդակցությունները ոչ միայն Մինսկի խմբի անդամների, այլեւ հակամարտող կողմերի հետ: Նրա ասելով, խորհրդակցությունները կշարունակվեն այնքան ժամանակ, մինչեւ կողմերի դիրքորոշումները բերվեն փոխհամաձայնության:

ՀԱՅՐԸ ԱՍՍՏՐՅԱՆ

ՎԱՐՁՈՎ ԲՆԱԿԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Բնակվելու կամ որպես գրասենյակ օգտագործելու համար վարձով տրվում է 3 սենյականոց երկհարկանի, լավ կահավորված եւ նորոգված սեփական բնակարան բոլոր հարմարություններով, բուխարիով:
Բնակարանը գտնվում է Երեւանի կենտրոնում, «Մոսկվա» կինոթատրոնի շրջակայքում:

ԿԱՐՁԸ ՄԻԱՅՆ ՏԱՐԴՐՄԱՆՈՎ

☎ 56-69-38 58-10-54

OK English OK

Թարգմանություններ անգլերենից եւ անգլերեն
Արագ, որակով եւ ոչ շատ թանկ:
հեռախոս 27-38-64

Եվրոպա

ԱՄՆ-ը անվճռական

«Նյու Յորք թայմզը» գրում է, «Բոսնիայի ու Հերցեգովինայի դատարանի առնչությամբ Վաշինգտոնից ստացվող կցկտուր եւ անորոշ ազդանշանները ՆԱՏՕ-ն ամենալուրջ ճգնաժամի մեջ են գցել սառը դատարանի ավարտից ի վեր»:

Բազմաթիվ եվրոդացիների կարծիքով, Ռ. Քրիստոֆերը չափազանց անվճռական է եղել այս ամիս ԱՄՆ-ի առաջարկությունների դարձրանման նպատակով Եվրոդայում իր կատարած շրջագայության ժամանակ, որի ընթացքում ոմանց, թե ինքը «եղել է լսողի դերում»:

ՄԱԿ-ում Մեծ Բրիտանիայի նախկին մշտական ներկայացուցիչ Ջ. Թոմսոնի հոդվածում ասվում է, «Մերբերն անում են այն, ինչ չհաջողվեց անել խորհուրդներին, նրանք դատապարտում են Արեւմուտքը: Երբ մեր դեկավարները չգինվեն հարկ եղած գերակայություններով, Ռ. Կարաջիչը կարող է հասնել այն բանին, ինչ չհաջողվեց Սարայեւոն եւ Խրուշչովին»:

«Մոնդը» հաղորդում է, որ Եվրոդայում ընդլայնվում է Բոսնիայում համատեղ գործողություններ ձեռնարկելու ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամ 5 պետությունների արտգործնախարարների ընդունած ծրագրի քննադատությունը: Թերթը հիշեցնում է, որ ԳԾՀ կանցլեր Քոլն արտահայտվել է շրջանում անվտանգության գոտիների ստեղծման դրության դեմ, երկյուղելով, որ դրանք կարող են վերածվել «մահմեդական ռեզերվացիաների»: Եվրախորհրդարանի դատգամավորները Ստրասբուրգի նստաշրջանում ընդունեցին բանաձեւ, որով դատապարտվում է Վաշինգտոնի ծրագիրը: Այդ ծրագրի նկատմամբ քննադատական վերաբերմունք արտահայտեց նաեւ եվրոդական ընկերակցության հանձնաժողովի ներկայացուցիչ Վան Դեն Բրուկը: Նա հանդես եկավ Բոսնիայի իրադրության քննարկման համար 12 երկրների կառավարությունների ղեկավարների արտակարգ հանդիպում անցկացնելու նախաձեռնությամբ:

ԱՐՄԵՆ ՊՐԵՍ ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Լուրերի Հոսք

Պայթյուն Չեչնիայի հեռուստաստուդիայում

Շաբաթ օրը Չեչնիայի հեռուստառադիոընկերության շենքում տեղի ունեցած պայթյունի հետեւանքով ընդհատվել է տեղական հեռուստատեսության ծրագիրը: Պայթյունի հետեւանքով տասնիկ հրդեհ է բռնկվել տարբեր կենտրոնական մասնաշենքում, որը լիովին ոչնչացել է: Ինչպես ԻԾ-ի թղթակցին հայտնեց Չեչնիայի լրատվության վարչության պետ Մոլդավի Ուդուգովը, ներկայումս կատարվում են վերականգնման աշխատանքներ, իսկ հեռուստաստուդիան առայժմ գործում է ժամանակավոր աշխատակարգով: Նոր տարեվորումների ձեռքբերման համար կպահանջվի 1,5-2 մլն դոլար: Գրոզնու պատասխանատու շրջանակները ենթադրում են, թե պայթյունը ընդդիմության կողմնակիցների ձեռքի գործն է, որոնց համար հեռուստատեսությունն անմատչելի է: ԻԾ

Ջոհար Դուդաեւի ազգականն սպանվել է հրազենից

Չեչնիայի նախագահի ազգական Շամիլ Դուդաեւը «արյան մեծ կորուստից մահացել է 5,45 տրամաչափի գնդակով վիրավորվելու եւ ոչ թե ավտոմոբիլային աղետի հետեւանքով», Գրոզնիում տեղական հեռուստատեսությամբ ելույթ ունենալով հայտարարեց Չեչնիայի հանրապետական դատաբժշկական փորձաքննության ֆիզիկատեխնիկական բաժանմունքի դատախանատու աշխատակիցը: Նույն տեղեկությունը հավաստեցին հերթապահ վիրաբույժ Ռամզան Ասուեւը եւ տեղգայցնող ելիզավետա Գալաեւան: Նրանց խոսքերով, Ջոհար Դուդաեւի ազգականին հիվանդանոց հասցրած մարդիկ հայտնել են, թե Շամիլը վիրավորվել է Թաստերական հրապարակում, որտեղ անցկացվում էր ընդդիմության հանրահավաք: Չեչեն-դրես գործակալության դատասխանատու վարկածի համաձայն, մայիսի 25-ին Գրոզնու Թաստերական հրապարակի շրջանում նախագահ Ջոհար Դուդաեւի ազգականը ենթարկվել է «զինված հարձակման»: ԻԾ

Դատգամավորների մեջ ՊԱԿ-ի 2756 գործակալ

Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի կիրառական քաղաքականության ինստիտուտի տնօրեն Օլգա Կրիստանովսկայան հայտնեց, որ 1989-90 թթ. նախկին ԽՍՀՄ-ում ՊԱԿ-ը բոլոր մակարդակների ժողդատգամավորների, խորհուրդներ է մտցրել 2756 մարդ: Շաբաթ օրը ելույթ ունենալով Մոսկվայում անցկացվող «ՊԱԿ. երեկ, այսօր, վաղը» միջազգային խորհրդաժողովում, նա ասաց, որ ՊԱԿ-ի թեկնածուներին դատգամավորական կորդուսում առաջադրելու համար կոմիտեում ստեղծվել էր հատուկ ստորաբաժանում: Միաժամանակ ՊԱԿ-ի նախկին գնդապետ Ալեքսանդր Կիչիխինն ասաց, որ ՊԱԿ-ը իր գործակալներն է ունեցել երկրի բոլոր հասարակական կազմակերպություններում: Նա ԻԾ-ին հայտնեց, որ դրանցում եղել է ընդամենը մոտ 3,5 հազար անդամակից: Ա. Կիչիխինը հայտարարեց, որ ՊԱԿ-ի ժառանգորդը այսօր ջանում է վերահսկել հասարակական կազմակերպությունների գործունեությունը: ԻԾ

«ԿԱՊՐՈԼԻՏ» ֆիրման եւ «ԲԻՈԿՈՆՎԵՐՍԻԱ» ասոցիացիան

Տրվեժ ավանի պահեստից վաճառում են կենսահումուս:
Մանրածախ գնորդների համար սահմանված է 20 տոկոս զեղչ:
Վճարը ցանկացած տեսակ
Հեռախոս՝ 27-81-91, 58-04-26, 58-54-27, 56-83-31:

«ԼՈՒՅՍ-90»

«ԼՈՒՅՍ-90» գրավաճառը գրավի դիմաց կանխիկ դրամ ամենացածր տոկոսներով, օրական 1 տոկոս:
Գրավատունը երաշխավորում է բոլոր տեսակի գործողությունների հասակությունը եւ ծգրիտ ժամանակ:
Հեռախոս՝ 77-79-40
Աշխատում է ամեն օր, ժամը 11-16-ը.
Երեքշաբթի եւ հինգշաբթի օրերը կիրակի:

KILIKIA TOUR

Դուք ուզում եք այցելել Գերմանիա՞:
«ԿԻԼԻԿԻԱ-ՏՈՒՐ» ընկերությունը տալիս է այդ հնարավորությունը:
Ընդամենը 250 $ եւ 50000 ռուբլով կդիմավորվեն Ձեր եկեղի փաստաթղթերը. մինչեւ 16 տարեկան երեխաների համար անվճար:

KILIKIA TOUR

ԴԻՄԵՔ ՄԵԶ ԵՎ ՄԵԿ ԱՄՍԻՑ ԴՈՒՔ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ԵՔ:

Սայաթ-Նովայի պող. «Անի» հյուրանոց, 7-րդ հարկ, 730 սենյակ
հեռ. 58-11-10, 59-43-70

Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Գլխավոր խմբագիր ՏԻԳՐԱՆ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր ՀԱՄԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841
Տնօրեն ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
Apple* Macintosh* համակարգչային շարվածք «Ազգ» թերթի
Azg armenian daily
Editor H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010
PUBLISET
* Թերթի ծեւավորման եւ տարատեսակների հեղինակ ՊԱՎԵԼ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Հրատարակչատան ... «Հարթակ» հրատ. տպարան, Երեւան 23 Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասից 69149. Տպաքանակ 36 000. Պատվեր 1520 Ստորագրված է տպագրության՝ 31.5.1993

digitised by A.R.A.R.@